



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

Ձեկույց

**ՀԸԳՀ-ի՝ բնապահպանական կառավարմանը վերաբերող բաժնում
սահմանված պարտավորությունների կատարման մշտադիտարկման**

Հեղինակ՝ Արթուր Գրիգորյան

Երևան 2025



Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Արթուր Գրիգորյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԸԳՀ՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՔՀԿ՝ Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՌԷԳ՝ Ռազմավարական էկոլոգիական գնահատում
ՇՄԱՓԿ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն



Անիտիագիր 5

Ներածություն և մեթոդաբանություն 11

Մշտադիտարկման ենթակա ԵՄ հրահանգների հոդվածները..... 15

1/ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2011/92/ԵՄ հրահանգ՝ շրջակա միջավայրի վրա որոշ պետական և մասնավոր նախագծերի ազդեցության գնահատման մասին, փոփոխված:..... 15

Եզրակացություններ և առաջարկություններ ՀԸԳՀ-ի՝ թիվ 2011/92/ԵՄ հրահանգին վերաբերելի հոդվածների իրականացման վերաբերյալ 23

2/ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի թիվ 2001/42/ԵՀ հրահանգ՝ շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին..... 26

ՀԸԳՀ-ի՝ թիվ 2001/42/ԵՀ հրահանգին վերաբերելի հոդվածների պահանջների կատարման վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ 32

3/Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի թիվ 2003/4/ԵՀ հրահանգը բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիության մասին, որով չեղյալ է համարվում Խորհրդի թիվ 90/313/ԵՏՀ հրահանգը..... 33

Եզրակացություններ և առաջարկություններ ՀԸԳՀ-ի՝ թիվ 2001/4/ԵՀ հրահանգին վերաբերելի հոդվածների պահանջների կատարման վերաբերյալ 36

4/Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կողմից 2003 թվականի մայիսի 26-ին ընդունված թիվ 2003/35/ԵՀ հրահանգ, որով նախատեսվում է հանրության մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի և ծրագրերի մշակմանը և փոփոխություններ են մտցվում խորհրդի թիվ 85/337/ԵՏՀ և թիվ 96/61/ԵՀ հրահանգներում, որոնք վերաբերում են հանրային մասնակցությանը և արդարադատության մատչելիությանը 37

ՀԸԳՀ-ի՝ թիվ 2001/4/ԵՀ-ի հրահանգին վերաբերելի հոդվածների իրականացման վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ 42

Հղումներ և նյութեր..... 43

Հավելված 47

Հարցաշար..... 47



Ամփոփագիր

Համաձայն 46(1)(ա) հոդվածի, մշտադիտարկման շրջանակում, ըստ անհրաժեշտության, գնահատվում է ներպետական օրենսդրության մոտարկումը ՀԸԳՀ-ի III Հավելվածում նշված ԵՄ հրահանգների այն կիրառելի դրույթներին, որոնք վերաբերում են Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ), Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ), բնապահպանական տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության ոլորտներում բնապահպանական կառավարման գնահատմանը՝ համաձայն ԵՄ կանոնակարգերի: Համաձայն 48-րդ հոդվածի «ա» կետի՝ մշտադիտարկումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության Ընդհանուր բնապահպանական ազգային ռազմավարության մշակմանը վերաբերող պարտավորության կատարման գնահատում, որն ընդգրկում է նաև (i-v) ենթակետերով սահմանված բնապահպանական կառավարման ռազմավարական ոլորտները և հանրային քաղաքականության այլ ոլորտներում շրջակա միջավայրի ինտեգրումը:

Հոդված 46(1)(ա)-ով սահմանվում է համագործակցությունը, որն ուղղված է շրջակա միջավայրի որակի պահպանմանը, պաշտպանությանը, բարելավմանը և վերականգնմանը, մարդու առողջության պաշտպանությանը, բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը և միջազգային մակարդակով տարածաշրջանային կամ համաշխարհային բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացմանը հետևյալ ուղղություններով.

- բնապահպանական կառավարում և հորիզոնական խնդիրներ, ներառյալ ռազմավարական պլանավորումը, - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, - ռազմավարական էկոլոգիական գնահատում, - անդրսահմանային համագործակցություն, - բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիություն, - որոշումների կայացման գործընթացներ, - վարչական և դատական կարգով բողոքարկման արդյունավետ ընթացակարգեր:

Կարևոր է նշել, որ 46-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հետևյալ հարցերը ընդգրկված չեն ՀԸԳՀ-ի III հավելվածում թվարկված որևէ ԵՄ հրահանգում և, հետևաբար, սույն մշտադիտարկման առարկա չեն դարձել.

- կրթություն և ուսուցում, - մշտադիտարկման և բնապահպանական տեղեկատվական համակարգեր, - տեսչական ստուգումներ և կիրարկում, - բնապահպանական ոլորտում պատասխանատվություն, - բնապահպանական ոլորտում հանցագործությունների դեմ պայքար:



Ստորև բերված Աղյուսակ 1-ում թվարկված ԵՄ կիրառելի հրահանգների վերոհիշյալ հոդվածները ենթակա են մշտադիտարկման՝ համաձայն ՀԸԳՀ-ի III հավելվածի: Այս աղյուսակը ներառում է ԵՄ այն հրահանգների դրույթների համառոտ և սպառիչ ցանկը, որոնք ենթակա են մոտարկման, ներկայացված են համեմատական վերլուծություն և արդյունքների գնահատում իրականացնելու համար չափելի չափանիշներ:

Աղյուսակ 1.

ԵՄ հրահանգները, որոնք ենթակա են մշտադիտարկման՝ համաձայն ՀԸԳՀ-ի 46 (1)(ա) հոդվածի III Հավելվածի.

1.	«Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր ծրագրերի ազդեցության մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի 2011/92/ԵՄ հրահանգ՝ փոփոխված (Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 2014/52/ԵՄ հրահանգ, որով փոփոխություններ են կատարվել շրջակա միջավայրի վրա որոշ պետական և մասնավոր նախագծերի ազդեցության գնահատման մասին թիվ 2011/92/ԵՄ հրահանգում)	Հոդվածներ 4, 5, 6, 7, 9 և 11
2.	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՀ հրահանգ՝ շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին	Հոդվածներ 3, 6 և 7
3.	Խորհրդի 90/313/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգ՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության մասին	Հոդվածներ 3, 4, 6 և 7
4.	Շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի և ծրագրերի կազմման մասով հանրային մասնակցությունը սահմանող և հանրային մասնակցության և	Հոդվածներ 2(2)(ա), 2(2)(բ), 2(2)(գ), 2(2)(դ), 2(3), 3(7) և 4(4)



արդարադատության մատչելիության վերաբերյալ Խորհրդի 85/337/ԵՏՀ և 96/61 /ԵՀ հրահանգները փոփոխող Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգ

Քանի որ ՀԸԳՀ-ի 48-րդ հոդվածի համար III Հավելվածով առանձին հրահանգ սահմանված չէ, ոչ էլ մատնանշված են համապատասխանությունը գնահատելու համար ԵՄ վերաբերելի ռազմավարական փաստաթղթերը, այս ռազմավարության կիրարկման աստիճանի վերաբերյալ հետևությունները հիմնված են Ընդհանուր ազգային բնապահպանական ռազմավարության փաստացի առկայության և ՀԸԳՀ-ի 48(ա)(i-v) հոդվածով սահմանված ռազմավարական ոլորտներին դրա համապատասխանության վրա:

Ինչպես նշվել է, ոլորտային հատուկ ռազմավարությունների մշակման պարտավորության կատարումը ենթակա է մշտադիտարկման ՀԸԳՀ-ի 48(բ) հոդվածի համաձայն: 48(ա)(i-v) պարբերությամբ սահմանված ռազմավարական ոլորտները թվարկված են ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Հայաստանի Հանրապետության ընդհանուր բնապահպանական ազգային ռազմավարության գործողության ոլորտը՝ համաձայն ՀԸԳՀ-ի 48(ա)(i-v) հոդվածի

<i>(i)</i>	ծրագրված ինստիտուցիոնալ բարեփոխումներ (ժամանակացույցներով)՝ բնապահպանական օրենսդրության կիրարկումն ու իրականացումն ապահովելու նպատակով
<i>(ii)</i>	բնապահպանական վարչարարության իրավասությունների բաշխում՝ ազգային, տարածաշրջանային եւ համայնքային մակարդակներով
<i>(iii)</i>	որոշումներ կայացնելու ընթացակարգեր եւ որոշումների իրականացում
<i>(iv)</i>	այլ ոլորտային քաղաքականությունների մեջ շրջակա միջավայրի ինտեգրման գործընթացը խթանելու ընթացակարգեր.
<i>(v)</i>	կանաչ տնտեսությանը եւ էկոնորարարությանն ուղղված միջոցառումների խթանում, մարդկային եւ ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսների ու վերահսկողության մեխանիզմի բացահայտում



Կիրարկման ճանապարհային քարտեզն ամբողջությամբ ներառում է ԵՄ հրահանգների հոդվածներով նախատեսված դրույթները, որոնք ենթակա են մոտարկման համաձայն ՀԸԳՀ-ի 46(1)(ա) հոդվածի: Այս դրույթներով կարգավորվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման/ՇՄԱԳ-ի (ենթակա է 2011/92/ԵՄ-ին), ռազմավարական էկոլոգիական գնահատման/ՌԷԳ-ի (ենթակա է 2001/42/ԵՀ-ին), բնապահպանական տեղեկատվության մատչելիության (ենթակա է 2003/4/ԵՀ-ին) և մասնավորապես հանրային մասնակցության և արդարադատության մատչելիության հետ կապված հարցերը (ենթակա է 2003/35/ԵՀ-ին):

Աղյուսակ 3

Նշված համատեղելի ԵՄ հրահանգների հոդվածները և ՀԸԳՀ-ի իրականացման ճանապարհային քարտեզների համարները

ԵՄ հրահանգ	Հոդվածներ	Համարը ճանապարհային քարտեզում
2011/92/ԵՄ	4, 5, 6, 7, 9 և 11	89.1 - 89.7
2001/42/ԵՀ	3, 6 և 7	90.1 - 90.4
2003/4/ԵՀ	3, 4, 6 և 7	91.1 – 91.5
2003/35/ԵՀ	2(2)(ա), 2(2)(բ), 2(2)(գ), 2(2)(դ), 2(3), 3(7) և 4(4)	92.1 – 92.5

Ինչպես նշված է համապատասխանության վերաբերյալ ստորև ներկայացված մանրամասն վերլուծության մեջ, սույն մշտադիտարկման արդյունքներով հիմնավորվում և անհերքելիորեն հաստատվում է, որ ներպետական օրենսդրությունը և ինստիտուցիոնալ համակարգը չեն համապատասխանում բնապահպանական պատշաճ կառավարման հարցերին առնչվող ԵՄ վերաբերելի կանոնակարգերին: Անհամապատասխանությունը կապված է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ողջ համակարգի արժանահավատության հետ: Շրջակա միջավայրի վրա որոշ պետական և մասնավոր նախագծերի ազդեցության գնահատման մասին թիվ 2011/92/ԵՄ հրահանգի իմաստով՝ անհամապատասխանությունը վերաբերում է հիմնարար խնդիրների, որոնք խաթարում են պետական մարմինների մասնագիտական իրավասությունը՝ կայացնելու հիմնավորված որոշումներ, ինչպես նաև ընդունված որոշումների, գործողությունների կամ անգործության օրինականությունը:

Մասնավորապես, «լիազոր մարմինը», որը պարտավոր է իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունների փորձաքննությունը, չունի բավարար փորձագիտական հմտություններ և ոչ էլ դրանց հասանելիություն՝ ուսումնասիրելու ՇՄԱԳ



հաշվետվությունները (2011/92/ԵՄ, հոդված 5), ինչը համապատասխան լիազոր մարմնի համար անհնար է դարձնում «թույլտվություն տրամադրելու կամ մերժելու» մասին որոշում կայացնելը (2011/92/ԵՄ, հոդվածներ 6 և 9)՝ հիմնվելով «շրջակա միջավայրի վրա ծրագրի էական ազդեցության մասին հիմնավորված եզրակացության» վրա (2011/92/ԵՄ, հոդված 5): Կանխատեսելի է, որ հասարակության շահագրգիռ անդամները բախվում են զգալի սահմանափակումների՝ կապված դատական կարգով բողոքարկման ընթացակարգից օգտվելու հետ, որի շնորհիվ պետք է հնարավորություն ունենան վիճարկել հանրային մասնակցությանը ենթակա որոշումների, գործողությունների կամ անգործության բովանդակային կամ ընթացակազային օրինականությունը» (2011/92/ԵՄ, հոդված 11) և, մասնավորապես, ՇՄԱԳ եզրակացությունը:

Նույնիսկ ավելի մեծ անհամապատասխանություն է առկա կարգավորումների և ինստիտուցիոնալ շրջանակի համատեքստում (ԵՄ 2001/42/ԵՀ հրահանգի մասով), որը վերաբերում է շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատմանը: Ներպետական օրենսդրությամբ սահմանված չեն բնապահպանական պարտադիր գնահատման ենթակա նախագծեր կամ ծրագրեր, որոնք նշված են այդ հրահանգում (2001/42/ԵՀ, հոդված 3(2)(ա)): Նախագծերը կամ ծրագրերը, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, չեն որոշվում ոչ առանձին ուսումնասիրության միջոցով, ոչ էլ նախագծերի և ծրագրերի տեսակների հստակեցմամբ (2001/42/, հոդված 3(5)): Ավելին, այդ հրահանգի II հավելվածում (3(5) հոդված) թվարկված ազդեցությունների հավանական նշանակալիությունը որոշելու չափանիշներ չկան: Նշանակված չեն մարմիններ, որոնց հետ, ելնելով իրենց պարտականություններից (2001/42/ԵՀ, հոդված 6(3)), պետք է իրականացվեն նախագծերի և ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ խորհրդակցություններ: Նմանապես, չեն նույնականացվում որոշումների ազդակիր կամ հավանական ազդեցություն կրող խմբերը (2001/42/ԵՀ, հոդված 6(4)): Հատկանշական է, որ վերջերս փոփոխված ներպետական օրենսդրությամբ նույնպես պատշաճ կերպով չի կանոնակարգում խորհրդակցությունների իրականացման ընթացակարգը (2001/42/ԵՀ, հոդված 6):

Հետաքրքիր է, որ ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզով նախատեսված և թիվ 2003/4/ԵՀ հրահանգին համապատասխանող օրինաստեղծ գործողություններից ոչ մեկը չի իրականացվել, ներառյալ «բնապահպանական տեղեկատվություն» տերմինը սահմանելու գործնական միջոցներ ձեռնարկելը և կիրառելի բացառություններ սահմանելը (2003/4/ԵՀ հոդված 3(3-5)), բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին նոր օրենք ընդունելը և պետական մարմինների կողմից բնապահպանական տեղեկատվությունը մատչելի դարձնելու կանխատեսելի իրավական մեխանիզմի ապահովումը (2003/4/ԵՀ հոդված 3(1)) կամ տեղեկատվության տարածման համակարգի ստեղծումը (2003/4/ԵՀ հոդված 7): Բնապահպանական



տեղեկատվության մատչելիության մասին նախատեսվող օրենքը չի ընդունվել, «Տեղեկատվության ազատության մասին» գործող օրենքում «բնապահպանական տեղեկատվություն» սահմանելու համար օրենսդրական փոփոխություններ չեն իրականացվել:

Ինչ վերաբերում է նախագծերի և ծրագրերի Ռազմավարական էկոլոգիական գնահատման ընթացքում հանրության պատշաճ մասնակցությունն ապահովելու պարտավորությանը, ներպետական օրենսդրությունը նույնիսկ չի սահմանում լիազոր մարմիններ նշանակելու չափանիշներ՝ ՌԷԳ-ի ընթացքում համապատասխան հանրային խորհրդակցություններ ապահովելու համար, ինչը սահմանված է թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2(2) հոդվածով, կամ նախագծերի և ծրագրերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս հանրության մասնակցության արդյունքները պատշաճ կերպով հաշվի առնելու չափանիշներ, ինչը սահմանված է թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2(2)(գ) հոդվածով: Թեև ՇՄԱԳ օրենքում և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերում կատարվել են օրենսդրական փոփոխություններ՝ կարգավորելու հանրային ծանուցման և խորհրդակցություններին մասնակցության մեխանիզմը, ներպետական օրենսդրության բովանդակությունը չի համապատասխանում թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2(3) հոդվածի պահանջին, այն է՝ նույնականացնել խորհրդակցություններին մասնակցելու իրավունք ունեցող խմբերին:

ՀԸԳՀ-ի 48-րդ հոդվածի «ա» կետի կատարման իմաստով Հայաստանի Հանրապետության Ընդհանուր բնապահպանական ազգային ռազմավարության մշակումը նախատեսված չէր Ճանապարհային քարտեզով, ոչ էլ հատուկ նպատակները, որոնք, ի թիվս այլոց, պետք է ընդգրկվեին այդ հոդվածի (i-v) ենթակետերում (նշված է Աղյուսակ 2-ում): Գործնականում, ոչ այդ ռազմավարությունը, ոչ էլ ինստիտուցիոնալ բարեփոխումների ինտեգրման քաղաքականությունը, որոնք նշված են (i-v) ենթակետերում, մշակված կամ նույնիսկ նախագծի տեսքով ներկայացված չեն: Ճանապարհային քարտեզում թվարկված բնապահպանական կառավարմանը վերաբերող միակ ռազմավարական փաստաթուղթը 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ՀՀ ռազմավարությունն է: Այդ փաստաթուղթը ընդունվել է 2016 թ.՝ որպես ՀՀ կառավարության արձանագրային որոշում:¹ Գործող ճանապարհային քարտեզով չի նախատեսվում շրջակա միջավայրի վերաբերյալ այլ ոլորտային ռազմավարությունների մշակում: Կոշտ թափոնների կառավարման մեկ այլ ռազմավարություն, որը վերաբերում է «5 Rs» կառավարման սկզբունքներին՝ ուղղված ՀԸԳՄ-ով սահմանված նպատակների

¹ Արձանագրային որոշում N 49 «2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին»՝ ընդունված 2021թ. ապրիլի 1-ին: <http://www.irtek.am/views/act.aspx?aid=88196>



իրականացմանը, կառավարության կողմից ընդունվել է 2021 թվականին: ² Այնուամենայնիվ, այս ռազմավարությունը նշված չէ Ճանապարհային քարտեզում: Կան որոշ նախաձեռնություններ միջպետական աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ՝ մշակելու այլ ոլորտային ռազմավարություններ, ինչպիսին է ջրային ոլորտի ռազմավարությունը,³ ինչպես նաև միջազգային բնապահպանական ծրագրերի միջոցով իրականացվող նախաձեռնություններ: Այնուամենայնիվ, այս նախաձեռնությունները սահմանված չեն ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզով: Այդ նկատառումը հաշվի առնելով՝ դժվար է գնահատել, թե 48(բ) հոդվածի պահանջները որքանով են կատարվել, քանի որ վարչական առօրյա գործունեության տարբեր արդյունքները դիտարկվում են որպես ՀԸԳՀ-ում նշված ոլորտային բնապահպանական ռազմավարությունների մշակման պարտավորության իրականացում: Մասնավորապես, ՀԸԳՀ-ի 48(բ)(ii) հոդվածի շրջանակում մշակվելիք ոլորտային հատուկ ռազմավարությունը կոչվում է «Ջրի որակի և ջրային ռեսուրսների կառավարում»՝ հատուկ կենտրոնանալով ջրային ռեսուրսների կառավարման ԵՄ համապատասխան քաղաքականությունների վրա, բայց դա ջրային ոլորտի ընդհանուր ռազմավարություն չէ: Հետևաբար, ոլորտային ռազմավարությունների մշակման նկատմամբ այս անկանոն մոտեցումը գրկում է հնարավորությունից՝ գնահատելու բովանդակության համապատասխանությունը ԵՄ-ի վերաբերելի քաղաքականությանը:

Ներածություն և մեթոդաբանություն

Սույն զեկույցում ներկայացվում է, թե որքանով են իրականացվել ՀԸԳՀ 46(1)(ա) հոդվածի պահանջները 50-րդ հոդվածի հետ համատեղ, ինչպես նաև 48(ա)(i-v) հոդվածի պահանջները, ինչպես նկարագրված է աշխատանքային ծրագրում: 48 (բ) հոդվածը, որի պահանջների իրականացման համար անհրաժեշտ է ընդունել ոլորտային հատուկ ռազմավարություններ, այս մշտադիտարկման առարկա չէ՝ ելնելով սահմանափակ ժամանակի և ռեսուրսների նկատառումներից: Այնուամենայնիվ, ոլորտային հատուկ ռազմավարությունների ընդունմանը վերաբերելի տեղեկատվությունը ներկայացված է սույն զեկույցում այնքանով, որքանով չնախատեսված կերպով դիտարկվել է այս մշտադիտարկման ընթացքում: Ոլորտային հատուկ ռազմավարությունների վերաբերյալ ենթադրությունները չպետք է դիտարկվեն որպես համապարփակ գնահատման ենթարկված բացահայտումներ, ինչպես այս մշտադիտարկման խնդրո

² Կառավարության որոշում N 464-Լ «Աղբահանության համակարգի ռազմավարությունը եվ ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»՝ ընդունված 2021թ. ապրիլի 1-ին: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151384>

³ Վարչապետի որոշում N 690-Ս «Ջրային ոլորտի ռազմավարության մշակման, ոլորտում արձանագրված խնդիրների եվ դրանցից բխող գործողությունների ծրագիր մշակելու նպատակով միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու մասին»՝ ընդունված 2024թ. հուլիսի 22-ին: <http://www.irtek.am/views/act.aspx?aid=126415>



առարկա ՀԸԳՀ հողվածների դեպքում է: Միևնույն ժամանակ, մենք կարևոր համարեցինք անդրադառնալ դրանց՝ ապագայում ավելի մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու առաջարկությամբ:

Մշտադիտարկման նպատակն է գնահատել բնապահպանական կառավարման և ռազմավարական այլ ոլորտներում շրջակա միջավայրի ինտեգրմանը վերաբերող պարտավորությունների կատարումը, ինչպես նախատեսված է ՀԸԳՀ-ի III հավելվածով: Կոնկրետ ոլորտի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն ունի որոշիչ դեր բնական ռեսուրսների կառավարման, կայուն զարգացման նպատակների իրականացման կարողությունների և ազգային մակարդակով կլիմայադիմացկունության ամրապնդման համատեքստում: Տեղական մակարդակում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացման, բնապահպանական որոշումների կայացման մեջ հանրության բովանդակալից մասնակցության ապահովման հարցում վատ վարչարարությունը հանգեցնում է ոլորտային վարչարարություն իրականացնող մարմինների գործողությունների նկատմամբ անվստահության և մշտական միջհամայնքային կոնֆլիկտների:

Մշտադիտարկման մեթոդաբանությունը հիմնված է տարբեր գործիքների վրա՝ ներառյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը, պաշտոնական հաշվետվություններից և հայտարարություններից ՀԸԳՀ-ի կիրարկման վերաբերյալ տվյալների հավաքագրումը, օրենսդրության և վերաբերելի ազգային քաղաքականության ուսումնասիրումը, շրջակա միջավայրի կառավարման տարբեր հարցերի վերաբերյալ վարչական դատարանի որոշումների քննությունը, ԶՀԿ-ների, համայնքի անդամների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչների հետ ֆոկլուս խմբային քննարկումները, համապատասխան վարչական մարմինների հետ հարցազրույցները: Մշտադիտարկման մեթոդաբանության շրջանակում և ՀԸԳՀ-ի դրույթների կիրարկման վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար կազմակերպվել են նպատակային հարցազրույցներ ակադեմիական շրջանակների, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և վարչարարություն իրականացնող պաշտոնյաների հետ, ինչպես նաև ֆոկլուս-խմբային քննարկումներ գյուղական բնակչության հետ՝ կապված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ժամանակ որոշումների կայացման և ընդհանուր վարչական կառավարման մեջ հանրային մասնակցության իրավունքի գործնական կիրառելիության հետ: ՇՄԱԳ գործընթացի իրավական և ինստիտուցիոնալ գնահատմանը վերաբերող տեղեկատվության ամենաարժեքավոր աղբյուրներից մեկը 10 տարի տևած դատական վարույթի շրջանակում կայացված վճիռն էր, որը ցույց է տալիս բնապահպանական կառավարման իրավական բացերը և ինստիտուցիոնալ հակասությունները, հատկապես շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընդհանուր համակարգի՝ վարչական մակարդակում անհամապատասխանությունը:



Ներպետական օրենսդրությունը, ներառյալ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, վերլուծվել են՝ գնահատելու համար դրանց համապատասխանությունը ՀԸԳՀ-ի III հավելվածում թվարկված ԵՄ կիրառելի հրահանգներին, որոնցով կարգավորվում են բնապահպանական կառավարման խնդիրները՝ կապված հանրության արդյունավետ մասնակցության, բնապահպանական տեղեկատվության մատչելիության, ժամանակին ծանուցման, բովանդակային քննարկումների և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացքում հետագծելի հետադարձ կապի հետ: ՀԸԳՀ-ի 46(1)(ա) հոդվածի պատշաճ կատարումը մշտադիտարկվել է՝ III Հավելվածում թվարկված ԵՄ համապատասխան հրահանգների յուրաքանչյուր հոդվածի հետ համապատասխանության վերաբերյալ վերլուծություններ կատարելով. 1) Կառավարության կողմից ընդունված ՀԸԳՀ-ի իրականացման ճանապարհային քարտեզ ⁴, 2) մոտարկման ենթակա ներպետական օրենսդրություն և ենթաօրենսդրական ակտեր: Ելնելով առկա օրենսդրական դաշտից՝ դիտարկվել է նաև ինստիտուցիոնալ համապատասխանությունը բնապահպանական կառավարմանը և որոշումներ կայացնելու իրավասություններին առնչվող համապատասխան պահանջներին:

Կարևոր է նշել, որ ուսումնասիրվել են ոչ միայն վերաբերելի ԵՄ հրահանգները, այլև այդ հրահանգների կիրարկման ուղեցույցները, որոնք պաշտոնապես հրապարակված են ԵՄ հանձնաժողովի EUR-Lex պորտալում: Նպատակն այն է, որ ԵՄ վերաբերելի հրահանգների դրույթներին ներպետական օրենսդրության համապատասխանությունը գնահատելիս որպես մշտադիտարկման հիմք ընդունել հրահանգների դրույթների առուտենտիկ մեկնաբանությունը և խուսափել այդ դրույթների հայեցողական մեկնաբանումներից: Հետևաբար, 46 (1)(ա) հոդվածի պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները հիմնված են ստանձնած պարտավորությունների առարկայական կատարման բովանդակահեն վերլուծության վրա, և ոչ թե ՀԸԳՀ հոդվածների և ԵՄ հրահանգների հետ ներպետական օրենսդրության և ռազմավարությունների գուտ տեխնիկական համեմատության վրա:

ՀԸԳՀ-ի դրույթների կատարումը հետևողականորեն գնահատելու համար կօգտագործվեն հետևյալ ցուցանիշները.

- 1) **Կիրարկման ճանապարհային քարտեզում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀԸԳՀ-ի հոդվածների դրույթներին, որոնք ենթակա են մշտադիտարկման:** Այս ցուցանիշը կընդգծի ՀԸԳՀ-ով ստանձնած պարտավորությունների անմիջական փոխկապակցվածությունը և թույլ կտա տարբերակել ամենօրյա վարչական և օրենսդրական գործունեության արդյունքները (օրենսդրական կամ

⁴ ՀՀ կառավարության 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշումը ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին, <https://www.arlis.am/hy/acts/153164>



ռազմավարական փոփոխություններ և այլն), որոնք ինչ-որ կերպ կարող են կապված լինել ՀԸԳՀ-ի նպատակների հետ, Ճանապարհային քարտեզում ներկայացված որոշակի պարտավորությունների նպատակային իրականացումից:

- 2) **Ընդհանուր ազգային բնապահպանական ռազմավարության և ոլորտային ռազմավարությունների մշակման պարտավորությունը հստակ նշված է կիրարկման ճանապարհային քարտեզում:** Այս ցուցանիշը թույլ է տալիս հստակ առանձնացնել ռազմավարական փաստաթղթերը, որոնք մասնավորապես թվարկված են ՀԸԳՀ-ի 48(ա-բ) հոդվածում և մշտադիտարկել կիրարկման աստիճանը՝ առանց դրանք շփոթելու այլ ռազմավարական փաստաթղթերի հետ, որոնց գործողության ոլորտում կարող են համընկումներ լինել (օրինակ՝ չփոթել ջրավազանային կառավարման պլանները ՀԸԳՀ-ում ամրագրված՝ «Ջրի որակի և ռեսուրսների կառավարման» վերաբերյալ ոլորտային ռազմավարություն ընդունելու պարտավորության հետ):
- 3) **Ընդունվել են ՀԸԳՀ-ի 48-րդ հոդվածի «ա» ենթակետով սահմանված ընդհանուր և ոլորտային ռազմավարություններ:** Այս ցուցանիշը իմպերատիվ կերպով բխում է ՀԸԳՀ-ի նշված հոդվածի սահմանումից և դրա իրականացումը պետք է գնահատվի ռազմավարությունը ընդունված լինելու կամ չլինելու փաստի հիման վրա:
- 4) **Համապատասխան օրենքների և ենթաօրենսդրական ակտերի դրույթները համապատասխանում են ՀԸԳՀ-ի III հավելվածում թվարկված ԵՄ հրահանգների վերաբերելի հոդվածներով սահմանված իրավական պահանջներին:** Այս ցուցանիշը թույլ է տալիս գնահատել գործող ներպետական օրենսդրության՝ այդ թվում օրենսդրական փոփոխությունների բովանդակության համապատասխանության աստիճանը ԵՄ կիրառելի հրահանգների իրավական ձևակերպումներին և պահանջներին: Կախված օրենսդրության մոտարկման մակարդակից՝ կարող է գնահատվել նաև բնապահպանական և ռեսուրսների կառավարման հարցերում իրականացվող վարչարարության համապատասխանությունը (օրինակ՝ արդյոք լիազոր մարմնի կարգավիճակը համապատասխանում է վերաբերելի դրույթներին):

Կարևոր է նշել, որ մեր գնահատականը և մեկնաբանությունները համապարփակ լինելու նպատակ չեն հետապնդում, այլ ավելի շուտ կենտրոնացված են այն ոլորտների վրա, որտեղ մենք ունենք հիմնավորված փորձառություն, քանի որ բնապահպանական կառավարմանն առնչվող ենթաբաժինների ավելի լայն ոլորտներին անդրադառնալու համար անհրաժեշտ են զգալիորեն ավելի շատ ժամանակ և ռեսուրսներ: Մշտադիտարկումն իրականացվել է վերը նշված մեթոդաբանության հիման վրա, իսկ



արդյունքները հիմնված են համապատասխանության գնահատման ցուցանիշների վրա: Սույն զեկույցի շրջանակում ներկայացված առաջարկությունների նպատակն է ապահովել քաղաքականության և օրենսդրական մոտարկման գործընթացի ավելի լավ համակարգում, այդ թվում ընդլայնել Ճանապարհային քարտեզի համար նպատակային արդյունավետ գործողությունների ծրագիր մշակելու վերաբերյալ քննարկումները:

Մշտադիտարկման ենթակա ԵՄ հրահանգների հոդվածները

1/ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2011/92/ԵՄ հրահանգ՝ շրջակա միջավայրի վրա որոշ պետական և մասնավոր նախագծերի ազդեցության գնահատման մասին, փոփոխված:⁵

Սույն Հրահանգի հետևյալ դրույթները պետք է կիրարկվեին ՀԸԳՀ-ի ուժի մեջ մտնելուց հետո 2 տարվա ընթացքում.

Օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի/մարմինների սահմանում

Այս պահանջը ուղղակիորեն չի բխում Հրահանգի կոնկրետ հոդվածից, այլ ամրագրված է բնապահպանական կառավարման ոլորտում պետության պարտավորությունների հայեցակարգում: Այս պահանջը վերաբերելի է բոլոր հրահանգներին, որոնք նշված են սույն մշտադիտարկման զեկույցում:

Ինչպես նշված է Ճանապարհային քարտեզում, այս պահանջը հիմնականում համընկնում է ՇՄԱԳ գործող օրենքի դրույթների հետ:⁶ Նշված օրենքում տրվում են ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և «պետական բնապահպանական փորձաքննության» սահմանումները (ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական ուսումնասիրության կարգը), որի արդյունքում տրամադրվում է ՇՄԱԳ-ի դրական կամ բացասական եզրակացություն: Այդ օրենքով նաև կարգավորվում են հանրային մասնակցության ընթացակարգերը, սահմանվում են ՇՄԱԳ-ի ենթակա գործունեության տեսակները և այլ հարցեր: Ինչ վերաբերում է լիազոր մարմնի նշանակմանը, այդ հարցը կարգավորվում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն Շրջակա միջավայրի նախարարությունը ճանաչվում է որպես ՇՄԱԳ և այլ հարակից գործառնություններ իրականացնող «լիազոր մարմին»: Համապատասխանաբար,

⁵ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2011/92/ԵՄ ԵՄ հրահանգ շրջակա միջավայրի վրա որոշ պետական և մասնավոր նախագծերի ազդեցության գնահատման մասին <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0052>

⁶ ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», ընդունվել է 2014թ. հունիսի 21-ին, փոփոխվել՝ 2023թ. մայիսի 3-ին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=178468>



Շրջակա միջավայրի նախարարության կազմում գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնը» (այսուհետ՝ ՇՄԱՓԿ) ձևավորված է իրականացնելու ՇՄԱԳ/ՌԷԳ փորձաքննություն և տրամադրելու դրական կամ բացասական փորձագիտական եզրակացություն, որը լիազորող փաստաթուղթ է գործունեությունն իրականացնելու թույլտվությունը ստանալու համար (համապատասխանում է թիվ 2011/92/ԵՄ հրահանգում նշված իրականացման համաձայնությանը):

ՇՄԱԳ օրենքի համաձայն՝ ՇՄԱԳ-ի շրջանակը ներառում է առաջարկվող ծրագրերի և նախագծերի ազդեցության գնահատումը շրջակա միջավայրին առնչվող տարբեր բաղադրիչների վրա, այդ թվում՝ մշակութային հուշարձանների, հանրային առողջության, անվտանգային գործոնների, որոնք, ելնելով կառավարության կառուցվածքից և գործառույթներից, Շրջակա միջավայրի նախարարության և դրա գերատեսչությունների իրավասության ներքո չեն գտնվում: Հատկանշական է, որ համաձայն թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 5(3)(բ) հոդվածի՝ «լիազոր մարմինը պետք է ունենա բավարար փորձագիտական գիտելիք (կամ դրան հասանելիություն)՝ ուսումնասիրելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը»: Այնուհանդերձ, պատասխանատու մարմինը (ՇՄԱՓԿ), որը գտնվում է Շրջակա միջավայրի նախարարության կառուցվածքի ներքո և օժտված է ՇՄԱԳ փորձաքննություն իրականացնելու լիազորությամբ, թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 4(5) հոդվածի համաձայն իրավասու չէ որպես «լիազոր մարմին» ճանաչվելու, քանի որ այն չի կարող հիմնավորված որոշում կայացնել՝ հանրային առողջության, մշակութային ժառանգության կամ անվտանգության վրա «ազդեցությունների ստուգման» հիման վրա, քանի որ այդ ոլորտները չեն գտնվում Շրջակա միջավայրի նախարարության պատասխանատվության և կառավարման ներքո: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ՇՄԱՓԿ-ն չի կարող համարվել որպես «լիազոր մարմին» թիվ 2011/92/ԵՄ և թիվ 2001/42/ԵՀ ԵՄ հրահանգների իմաստով, քանի որ ՇՄԱԳ փորձաքննության առարկան դուրս է Շրջակա միջավայրի նախարարության իրավասությունների, ինչպես նաև ՇՄԱՓԿ-ի՝ այդ բաղադրիչների վրա ազդեցությունները գնահատելու մասնագիտական կարողությունների շրջանակներից:

ՇՄԱԳ փորձաքննության մի շարք եզրակացությունների ուսումնասիրությունը (համապատասխանում է «լիազոր մարմնի հիմնավորված եզրակացությունը շրջակա միջավայրի վրա նախագծի էական ազդեցությունների վերաբերյալ»՝ թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 1(2)(է)(iv) հոդվածի կարգավորմանը) ցույց է տալիս, որ նույնիսկ բաց հանքերի շահագործման հետ կապված խոշոր և համալիր նախագիծը կազմվել է մեկ կամ երկու մասնագետների կողմից, որոնք օբյեկտիվորեն չեն կարող ունենալ բավարար գիտելիքներ՝ ուսումնասիրելու այս նախագծերի բնապահպանական ազդեցությունների ամբողջ տիրույթը և չեն կարող իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների առարկայական ստուգում կամ գնահատում՝ հիմնվելով ծրագիրը



նախաձեռնողի կողմից տրամադրված տեղեկատվության վրա, ինչպես սահմանված է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 4(5) հոդվածով: Հետևաբար, առկա է ազդեցության համապարփակ գնահատում իրականացնելու և ՇՄԱԳ-ի հիմնավորված եզրակացություն մշակելու համար լիազոր մարմնի կարողությունների ինստիտուցիոնալ բաց:

Հարկ է նշել, որ վերոնշյալ պնդումներով մենք որևէ չափով կասկածի տակ չենք դնում Շրջակա միջավայրի նախարարությունում աշխատող մասնագետների պատշաճ մասնագիտական որակները կամ կարողությունները: Մույնով մենք ընդգծում ենք վարչական որոշումների կայացման համակարգում ինստիտուցիոնալ բացերը, որոնք չեն բավարարում «լիազոր մարմնի» կարգավիճակի պահանջները, ինչպես սահմանված է թիվ 2011/92/ԵՄ հրահանգով:

Պահանջների սահմանում, ըստ որոնց սույն Հրահանգի I հավելվածում նշված նախագծերը ենթակա կլինեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, և ընթացակարգի սահմանում, որով կորոշվի, թե սույն հրահանգի, թե սույն Հրահանգի II Հավելվածի որ նախագծերի համար կպահանջվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (Հոդված 4)

Այս պահանջը նշված է Ճանապարհային քարտեզի N 89.2 կետում, որով պարտավորություն է սահմանվում իրականացնել համեմատական վերլուծություն և, անհրաժեշտության դեպքում, մոտարկում թիվ 2011/92/ԵՄ հրահանգի I, II և III հավելվածներում նշված գործողություններին: Հարկ է նշել, որ ի տարբերություն ՀԸԳ-ի III հավելվածի, Ճանապարհային քարտեզում այդ հրահանգի III հավելվածը նշվում է որպես մոտարկման ենթակա: Այն սահմանում է այն չափանիշները, որոնց հիման վրա որոշվում է, թե արդյոք նախագիծը պետք է գնահատման ենթարկվի նշված շեմերի հիման վրա:

ՇՄԱԳ մասին օրենքի 12-րդ հոդվածով բավարար չափով սահմանված են ՇՄԱԳ-ի ենթակա բոլոր տեսակի գործունեության տեսակները, ինչը հիմնականում հիմնված է Օրիուսի կոնվենցիայի I հավելվածի վրա:⁷ Թիվ 2011/92/ԵՄ հրահանգի Հավելված III-ում թվարկված չափանիշներն ընդհանուր առմամբ ներկայացված են ՇՄԱԳ-ի վերաբերյալ օրենքի 12-րդ և 17-րդ հոդվածներում, ներառյալ այն գործունեությունը, որը ենթակա է ՇՄԱԳ փորձաքննության (որոշվում է դեպք առ դեպք սկզբունքով): ՇՄԱԳ եզրակացություն տրամադրելու ժամկետը նույնպես համապատասխանում է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 4-րդ հոդվածին:

⁷ Տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության մասին [ՄԱԿ-ի ԵՏՀ](https://un7e.org/DAM/env/pp/documents/cep43e.pdf) կոնվենցիա: <https://un7e.org/DAM/env/pp/documents/cep43e.pdf>



**Նախաձեռնողի կողմից տրամադրվելիք տեղեկատվության շրջանակի որոշում
(հոդված 5)**

ՇՄԱԳ օրենքի 15-րդ հոդվածով սահմանվում են սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակը և տվյալները, որոնք պետք է ներառվեն նախաձեռնողի կողմից մշակված ՇՄԱԳ հաշվետվության մեջ: Ծանապարհային քարտեզի թիվ 89.3 կետով սահմանված պարտավորության իրականացման համատեքստում՝ ընդունվել է նաև ՇՄԱԳ հաշվետվության մշակման ընթացակարգը սահմանող ընդհանուր մեթոդաբանությունը: Բացի այդ, ներկայումս Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվում է ՇՄԱԳ հաշվետվություն⁸ կազմելու կարգը, որով զգալիորեն բարելավվում է ՇՄԱԳ հաշվետվությունների կանխատեսելիությունը և բարձրացվում է պահանջվող տեղեկատվության որակը: Այնուամենայնիվ, և՛ օրենսդրությունը, և՛ գործնականում ՇՄԱԳ հաշվետվությունները լիովին չեն համապատասխանում թիվ 2011/92/ԵՄ 5(1) հոդվածին և Հավելված IV-ին (տեղեկատվություն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության համար): Մասնավորապես, այն չի ներառում անուղղակի ազդեցությունները, ինչպես նաև կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, մշտական և ժամանակավոր ազդեցությունները կամ շրջակա միջավայրի վրա ծրագրի ակնկալվող էական բացասական ազդեցությունների նկարագրությունը, որը բխում է լուրջ արտակարգ իրավիճակների ռիսկերի նկատմամբ ծրագրի խոցելիությունից: Չեկույցում ներկայացված նկարագրությունների և գնահատումների համար օգտագործվող աղբյուրները մանրամասնող հղումների ցանկը նույնպես պատշաճ ներպետական օրենսդրությամբ պատշաճ կերպով սահմանված չէ: Ազդեցությունների գնահատման և դրան հաջորդող ՇՄԱԳ փորձաքննության ընթացքում չի իրականացվում բացասական արտաքին ազդեցությունների հաշվարկ և դրամայնացում, ինչպես նաև տնտեսական օգուտների և վնասների վերլուծություն:

Գնահատման հիմնական մարտահրավերներից մեկը հիմնավորված և փաստարկված գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ հավաստի տվյալների բացակայությունն է: ՇՄԱԳ հաշվետվության ⁹ փորձաքննության մասին կառավարության որոշման նպատակն է լրացնել այս բացը՝ ՇՄԱԳ հաշվետվության մեջ արտացոլված տեղեկատվության մեթոդաբանությունը և հավաստիությունը բացատրելու պահանջներ սահմանելու միջոցով: Այնուամենայնիվ, ՇՄԱԳ օրենքում համանման պահանջի բացակայությունը, ինչպես նաև ՇՄԱԳ փորձաքննության ընթացքում ներկայացված տվյալների վերանայման մեխանիզմի հետ կապված

⁸ ՀՀ կառավարության որոշումը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ընդունվել է 2024թ. հուլիսի 25-ին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=195601>

⁹ ՀՀ կառավարության 2024թ. մայիսի 2-ի N 643-Ն որոշում փորձաքննության, պետական փորձաքննական եզրակացության մեջ փոփոխություն կամ լրացում կատարելու, պետական փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը հաստատելու մասին, <https://www.arlis.am/documentView.aspx?docid=192441>



համակարգային բացերը, այս պահանջը դարձնում են անարդյունավետ՝ հաշվի առնելով այն փաստը, որ ներկայացված տեղեկատվության հավաստիությունը չի կարող պատշաճ կերպով ստուգվել ՇՄԱԳ փորձաքննության ընթացքում:

Ավելին, թեև հանրային առողջության, մշակութային ժառանգության և կլիմայական գործոնների վրա ազդեցության գնահատումը պահանջվում է ՇՄԱԳ օրենքով, նախաձեռնողի համար չկա որևէ կանոնակարգ, մեթոդաբանություն կամ ուղեցույց, որտեղ կսահմանվեն այն իրականացնելու չափանիշները: Էլ ավելին, գործողության շրջանակի սահմանման (սքոփինգ), նախնական գնահատման (սքրինինգի) և ՇՄԱԳ հաշվետվության կազմման ¹⁰, ինչպես նաև ՇՄԱԳ-ում կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության ինտեգրման մասին ԵՄ ուղեցույցները մանրամասն նկարագրում են ազդեցությունների գնահատման բնութագրերն ու մեթոդները՝ համաձայն թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 5(1) հոդվածի և Հավելված IV-ի: Այսպիսով, ներպետական օրենսդրությունը չի համապատասխանում ԵՄ նշված կարգավորումներին, թեև որոշ օրենսդրական փոփոխություններ դեռ ընթացքի մեջ են:

Բնապահպանական ոլորտի մարմինների հետ խորհրդակցությունների ընթացակարգի և հանրության հետ խորհրդակցությունների ընթացակարգի սահմանում (հոդված 6)

ՇՄԱԳ օրենքի 28-րդ և 29-րդ հոդվածներով, ինչպես նաև Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ ընդհանուր առմամբ կարգավորվում են ՇՄԱԳ փորձաքննությանը հանրության մասնակցության ընթացակարգերը: Այնուամենայնիվ, վաղ փուլում հանրությանը ներկայացված տեղեկատվության ծավալն ու որակը շատ սահմանափակ է՝ բնապահպանական որոշումների կայացմանը նախապատրաստվելու և արդյունավետ մասնակցելու համար, ի տարբերություն թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 6(3)(ա-գ) հոդվածով սահմանված դրույթների, և համայնքների ու բնապահպանական ոլորտի հասարակական կազմակերպությունների համար չի ապահովում բավարար տվյալներ իրազեկված համաձայնություն տալու կամ մտահոգությունները հստակորեն ձևակերպելու համար:

ՇՄԱԳ մասին օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգավորմամբ նախատեսվում է անհրաժեշտության դեպքում այլ մարմիններից կարծիք հայցելու հնարավորություն՝ «ՌԷԳ կամ ՇՄԱԳ հաշվետվությունն ուղարկվում է կարծիքների՝ համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ»:

¹⁰ Եվրոպական հանձնաժողով, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, ուղեցույց փաստաթղթեր https://environment.եՂ.ԵՄropa.ԵՄ/law-and-governance/environmental-assessments/environmental-impact-assessment_en



կարգավորումը վերաբերելի է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 6(1)¹¹ հոդվածին, որով սահմանվում է, որ կարծիք կարող են ներկայացնել այն «մարմինները, ում նախագիծը վերաբերելի է բնապահպանական ոլորտում իրենց պարտականությունների կամ տեղական և տարածաշրջանային մակարդակում իրենց իրավասությունների բերումով»: Դա խորհրդակցությունների գործընթացի մաս է կազմում, ինչպես նշված է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 6(2)¹² հոդվածում:

Այնուամենայնիվ, ՇՄԱԳ փորձաքննության ընթացքում ստացված կարծիքները պարտադիր կատարման ենթակա չեն, և ՇՄԱՓԿ-ն կարող է հրաժարվել հաշվի առնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների արտահայտած դիրքորոշումները: Որպես ապացույց նշենք, որ ՀՀ վարչական դատարանը գտել է, որ Առողջապահության նախարարությունը ՇՄԱԳ փորձաքննության շրջանակում իր տրամադրած կարծիքի մասով դատարան դիմելու իրավունք չունի՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ այդ եզրակացությունը լիազոր մարմնի կողմից տրված վարչական ակտ չէ:¹³ Բացի այդ, ՇՄԱԳ օրենքը նախատեսում է ՇՄԱԳ-ի ընթացքում ազդեցության գնահատման որոշ հարցերի վերաբերյալ մասնագիտական գիտելիք ունեցող փորձագետներին ներգրավելու հնարավորություն, սակայն նրանց եզրակացությունները նույնպես կարող են համարվել չհիմնավորված և մերժվել ՇՄԱՓԿ-ի կողմից:

Հետևաբար, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգի շրջանակում կարծիքներ ներկայացնող գերատեսչությունները նշանակված չեն որպես

¹¹ Թիվ 2011/92/ԵՄ հրահանգի հոդված 6(1), «Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ այն մարմիններին, ում նախագիծը վերաբերելի է բնապահպանական ոլորտում իրենց պարտականությունների կամ տեղական և տարածաշրջանային մակարդակում իրենց իրավասությունների բերումով, հնարավորություն տրվի արտահայտելու իրենց կարծիքը նախաձեռնողի կողմից տրամադրված տեղեկատվության և թույլտվություն ստանալու հայտի վերաբերյալ... Այդ նպատակով անդամ պետությունները պետք է սահմանեն այն մարմիններին, որոնց հետ պետք է խորհրդակցություններ անցկացնել՝ ընդհանուր պայմաններով կամ յուրաքանչյուր դեպքի հիման վրա: 5-րդ հոդվածի համաձայն հավաքագրված տեղեկատվությունը փոխանցվում է այդ մարմիններին»: <https://Eur-lex.EUropa.EU/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:02011L0092-20140515>

¹² Թիվ 2011/92/ԵՄ հրահանգի հոդված 9(1), «Թույլտվություն տրամադրելու կամ մերժելու որոշում ընդունելուց հետո իրավասու մարմինը կամ մարմինները այդ մասին անհապաղ տեղեկացնում են հանրությանը և 6(1) հոդվածում նշված մարմիններին՝ ներպետական ընթացակարգերին համապատասխան, և ապահովում են, որ հետևյալ տեղեկատվությունը հասանելի լինի հանրությանը և 6(1) հոդվածում նշված մարմիններին՝ հաշվի առնելով, անհրաժեշտության դեպքում, հոդված 8ա(3)-ում նշված դեպքերը.

բ) հիմնական պատճառներն ու նկատառումները, որոնց վրա հիմնված է որոշումը, ներառյալ տեղեկատվությունը հանրության մասնակցության գործընթացի մասին: Սա ներառում է նաև խորհրդակցությունների արդյունքների մասին ամփոփ տեղեկատվությունը և 5-ից 7-րդ հոդվածների համաձայն հավաքագրված տեղեկությունները, և թե ինչպես են այդ արդյունքները ներառվել կամ ինչպես է այլ կերպ դրանց անդրադարձ կատարվել, մասնավորապես՝ 7-րդ հոդվածում նշված ազդակիր անդամ պետությունից ստացված մեկնաբանությունները»:

<https://Eur-lex.EUropa.EU/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:02011L0092-20140515>

¹³ Թիվ ՎԴ/1049/05/15 գործով Վարչական դատարանի որոշում <https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=administrative>



պատասխանատու մարմիններ թիվ 2011/92/ԵՄ 6(1) հոդվածին համապատասխան պարտականություններ կատարելու համար, քանի որ այս մարմինները օրենսդրության մակարդակով վարչական պատասխանատվություն ստանձնելու իրավասություն չունեն: Հետևաբար, ՀՀ օրենսդրության և դատական պրակտիկայի համատեքստում ՇՄԱԳ գործընթացում այլ գերատեսչությունների կողմից կարծիքի տրամադրումը չի համապատասխանում թիվ 2011/92/ԵՄ 6(2) հոդվածով սահմանված համանման կարգավորմանը և չի կարող լրացնել ՇՄԱԳ փորձաքննություն իրականացնելու և հիմնավորված եզրակացություն ընդունելու՝ «լիազոր մարմնի» պատասխանատվության ինստիտուցիոնալ բացը:

ԵՄ այն անդամ պետությունների հետ տեղեկատվության փոխանակման և խորհրդակցության վերաբերյալ միջոցառումների սահմանում, որոնց շրջակա միջավայրը հավանաբար զգալի ազդեցություն կկրի ծրագրից (հոդված 7)

Թիվ 89.5 ճանապարհային քարտեզով սահմանվել է ազդեցության ենթակա երկրների միջև տեղեկատվության փոխանակման և խորհրդակցության ընթացակարգերը սահմանող օրենսդրության մշակման կամ փոփոխությունների անհրաժեշտությունը: Հետագայում 2023թ.-ի ՇՄԱԳ օրենքում կատարված օրենսդրական փոփոխություններով հիմնովին կարգավորվել են անդրսահմանային ազդեցության գնահատման ընթացակարգերը:

Կարելի է համարել, որ այս հոդվածը լիովին համապատասխանում է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածին:

Թույլտվություն ստանալու համար դիմումների վերաբերյալ որոշումների արդյունքների մասին հանրությանը տեղեկացնելուն ուղղված միջոցառումների սահմանում (հոդված 9)

Թիվ 89.6 ճանապարհային քարտեզում նշված է, որ համապատասխան պահանջները սահմանված են Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքով և կառավարության համապատասխան որոշմամբ, հետևաբար, մոտարկման կարիք չկա: Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէ ՇՄԱԳ եզրակացության հիմնավորումների մասին հանրությանը ծանուցելու համապատասխան ընթացակարգ:

Մինչույն ժամանակ, համաձայն թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 9-րդ հոդվածի (բ) կետի, եթե որոշում է կայացվել թույլտվություն տրամադրելու կամ մերժելու մասին, լիազոր մարմինը հանրությանը տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը. «բ) ուսումնասիրելով շահագրգիռ հանրության արտահայտած մտահոգությունները և կարծիքները, հիմնական պատճառներն ու նկատառումները, որոնց վրա հիմնված է



որոշումը...»: Հանրությունը տեղեկացվում է արդյունքների մասին համապատասխան ընթացակարգերի համաձայն:

Համաձայն ՇՄԱԳ օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի. «Լուսմների ընթացքում ներկայացված դիտողությունները և առաջարկությունները նախաձեռնողը և լիազոր մարմինը պետք է հաշվի առնեն: Հաշվի չառնելու դեպքում տրվում են հիմնավոր պատճառաբանումներ»: Կարծիքները հաշվի առնելու վերաբերյալ նմանատիպ հստակ սահմանում տրված է «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ: ¹⁴ Ընթացակարգային օրենսդրության մեջ, սակայն, հետադարձ կապի պատշաճ մեխանիզմ սահմանված չէ: Գործնականում խորհրդակցությունների ընթացքում ձեռք բերված դիտողություններն ու կարծիքները ներկայացվում են անորոշ և ոչ անձնավորված ձևով՝ փորձաքննության եզրակացության մեջ չպատճառաբանելով այդ տեղեկատվության հիմնավորումը: Ներպետական օրենսդրությամբ չի նախատեսվում խորհրդակցությունների արդյունքների ամփոփում և տեղեկատվություն, թե ինչպես են արդյունքները ներառվել կամ ինչպես է այլ կերպ դրանց անդրադարձ կատարվել՝ համաձայն թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 9(1)(բ) հոդվածի: Հաշվի առնելով գործնականում լուսմների ընթացքում ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները հաշվի առնելու մասին դրույթի հայեցողական մեկնաբանությունը՝ թիվ 2011/92/ԵՄ 9-րդ հոդված-ի մասով ևս համապատասխանություն չկա:

Վարչական և դատական մակարդակներում արդյունավետ, չափազանց մեծ ծախսեր չընդգրկող և ժամանակին իրականացվող՝ հանրությանը և ոչ կառավարական կազմակերպություններին ներգրավող՝ վերանայման ընթացակարգերի սահմանում (հոդված 11)

Ներպետական օրենսդրությամբ և ներկայիս դատական պրակտիկայով ճանաչվում է ազդակիր համայնքների և բնապահպանական ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների իրավական կարգավիճակը: Այնուամենայնիվ, օրենքներով հստակ չի սահմանվում, և դատական պրակտիկայում հակասություններ կան այն մասին, թե որ որոշումները, գործողությունները կամ անգործությունն են ենթակա դատական կարգով բողոքարկման:

Թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 11(2) հոդվածով սահմանվում է, որ օրենսդրությամբ պետք է որոշվի, թե որ փուլում կարող են վիճարկվել որոշումները, գործողությունները կամ անգործությունը: Այնուամենայնիվ, ՇՄԱԳ փորձաքննության եզրակացությունը, որը հանդիսանում է ՇՄԱԳ փորձաքննության հիմնական փաստաթուղթը, ներպետական օրենսդրության համաձայն, չի համարվում «վարչական ակտ», ինչը թույլ չի տալիս այն

¹⁴ ՀՀ կառավարության N 2343-Ն որոշումը՝ ընդունված 2023թ. դեկտեմբերի 28-ին
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188064>



վիճարկել դատարանում: Հետևաբար, թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 11-րդ հոդվածի մասով նույնպես ամբողջական համապատասխանություն ապահովված չէ:

Եզրակացություններ և առաջարկություններ ՀԸԳՀ-ի՝ թիվ 2011/92/ԵՄ հրահանգին վերաբերելի հոդվածների իրականացման վերաբերյալ

Չնայած Ճանապարհային քարտեզում ներկայացված հավաստիացումներին՝ կապված ԵՄ կարգավորումներին ՇՄԱԳ օրենսդրության վերաբերելիության հետ, առկա են հիմնարար բացեր՝ կապված ՇՄԱԳ-ի իրականացման համար պատասխանատու մարմնի վարչական իրավասությունների և ինստիտուցիոնալ կարողությունների հետ: Փաստացիորեն, հանրային առողջության և մշակութային ժառանգության վրա ազդեցության գնահատումը պատշաճ կերպով չի իրականացվում տվյալ ոլորտում կոնկրետ իրավասություններում ներգրավված պատասխանատու մարմինների կողմից, ինչպես սահմանված է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 6(1) հոդվածով: Տարբեր վարչական մարմինների կողմից ներկայացված կարծիքները, որոնց նպատակն է նպաստել ՇՄԱԳ պաշտոնական եզրակացության մշակմանը, չունեն բովանդակային և ընթացակարգային պատշաճ կանոնակարգում:

Նախաձեռնողի կողմից ՇՄԱԳ հաշվետվություններում գիտականորեն հիմնավորված և հավաստի տվյալներ ներառելու իրավական պահանջի բացակայության և համալիր ՇՄԱԳ իրականացնելու ինստիտուցիոնալ կարողությունների բացակայության պայմաններում խաթարվում է ՇՄԱԳ գործընթացի հանդեպ ողջ ինստիտուցիոնալ վստահությունը և կասկածի տակ է դրվում դրա արդյունքում ստացված փորձաքննական եզրակացությունների հիմնավորվածությունը:

Հանրության հետ խորհրդակցությունների վաղ փուլում հանրությանը տրամադրվող անբավարար տեղեկատվությունը հանգեցնում է որոշումների կայացման ընթացակարգերում շահագրգիռ խմբերի արդյունավետ մասնակցությունն ապահովելու պահանջի չկատարմանը, ինը սահմանված է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 6(2) հոդվածում:

Նշված իրավական և ինստիտուցիոնալ ձախողումները խաթարում են շրջակա միջավայրի հարցերում որոշումներ կայացնողների գործառնական կարողությունը և, ընդհանուր առմամբ, բնապահպանական կառավարման համակարգը: Դրա բացակայությունը հանգեցնում է մշտական բախումների պետական և քաղաքային իշխանությունների միջև, ինչպես նաև միջհամայնքային կոնֆլիկտների՝ տեղական համայնքների միջև, հատկապես հանքարդյունահանման ոլորտում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ անհշան օրենսդրական փոփոխությունները դժվար թե կարողանան հասնել ՀԸԳՀ-ով սահմանված համագործակցության նպատակներին, որոնք վերաբերում են բնապահպանական կառավարման և հորիզոնական խնդիրներին, ներառյալ ռազմավարական պլանավորմանը և շրջակա միջավայրի վրա ազդեցության



գնահատմանը: Հաշվի առնելով ՀԸԳՀ-ի 46-րդ հոդվածով սահմանված նպատակները, ըստ որոնց համագործակցությունը նպատակաուղղված է շրջակա միջավայրի որակի պահպանմանը, պաշտպանությանը, բարելավմանը և վերականգնմանը, մարդու առողջության պաշտպանությանը, բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը և տարածաշրջանային կամ գլոբալ բնապահպանական խնդիրները լուծելու համար միջազգային մակարդակով գործողությունների խրախուսմանը, անհրաժեշտ են հիմնարար իրավական և վարչական բարեփոխումներ շրջակա միջավայրին վերաբերող գնահատումների համակարգում: Վերջերս ընդունված և փոփոխված օրենսդրությունը (ՇՄԱԳ օրենք, նախարարի հրաման) պատշաճ կերպով չեն հասցեագրում նախաձեռնողի կողմից ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային այլ փաստաթղթերում համապարփակ հավաստի տվյալներ տրամադրելու պահանջը, և, հետևաբար, դրանցում ևս մեկ անգամ փոփոխություններ կատարելու կարիք կա:

Հաշվի առնելով խնդիրների բնույթը՝ դրանց կարգավորմանն ուղղված իրավական և ինստիտուցիոնալ փոփոխություններ կարող են իրականացվել կառավարության և Ազգային ժողովի կողմից: Կառավարությունը պետք է ստեղծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր մարմին և ընդունի դրա կանոնադրությունը՝ այդ մարմնին շնորհելով ՇՄԱԳ/ՌԷԳ իրականացնելու համապարփակ լիազորություններ: Դրա համար անհրաժեշտ պայմաններն են.

ա) Կառավարությանը ենթակա գերատեսչություն, որն ունի կանոնադրական իրավասություն իրականացնելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումներ ՇՄԱԳ օրենքով սահմանված բոլոր ոլորտներում, ներառյալ հանրային առողջությունը, մշակութային ժառանգությունը, աղետների կառավարումը և այլն:

բ) Լիովին հազեցած անձնակազմ, որը բաղկացած է մասնագետներից, որոնք պատասխանատու են իրենց մասնագիտական ուսուցման/գիտելիքի ոլորտում իրականացնել սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումներ:

գ) ՇՄԱԳ եզրակացությունը հանդիսանում է շահագրգիռ հանրության կողմից վարչական և դատական կարգով բողոքարկման ենթակա վարչական ակտ:

Որպես այլընտրանք, կարելի է պահպանել ՇՄԱՓԿ-ի՝ որպես Շրջակա միջավայրի նախարարության ենթակայության տակ գտնվող մարմնի ինստիտուցիոնալ կարգավիճակը, սակայն ՇՄԱԳ եզրակացության կազմման պատասխանատվությունը և ընթացակարգերը պետք է բավարարեն հետևյալ չափանիշներին.



ա) Սահմանված է այն մարմինների համապարփակ ցանկը, որոնց տվյալ նախագիծը վերաբերելի է՝ բնապահպանական ոլորտում իրենց պարտականությունների և իրավասությունների բերումով, ինչպես նշված է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 6(2) հոդվածում, և որոնք պարտադիր կերպով պետք է մասնակցեն ՇՄԱԳ գործընթացին:

բ) Իրենց իրավասության ոլորտում ՇՄԱԳ իրականացնելու համար վերոնշյալ մարմինների համար մշակված են բովանդակային և ընթացակարգային օրենսդրական պահանջներ (օրինակ՝ կարգավորումներ առողջության վրա ազդեցության գնահատման, կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման, ստորգետնյա և մակերևութային ջրերի վրա ազդեցության գնահատման, մթնոլորտային արտանետումների ազդեցության գնահատման և այլնի վերաբերյալ):

գ) Իր իրավասության ոլորտում ՇՄԱԳ իրականացմանը ներգրավված մարմիններից յուրաքանչյուրը պատասխանատու է ազդեցության գնահատման իր մասի համար, և նրանց կողմից ընդունված ակտերը ենթակա են վարչական և դատական կարգող բողոքարկման շահագրգիռ հանրության կողմից:

Առաջարկություն 1.

Կառավարությունը պետք է հիմնի լիազոր մարմին, որն իրավասու կլինի և կունենա բավարար կարողություններ՝ իրականացնելու համալիր և համապարփակ ՇՄԱԳ/Ռ-ԷԳ:

Առաջարկություն 2. Ազգային ժողովը պետք է նախաձեռնի օրենսդրական փոփոխություններ ՇՄԱԳ օրենքում և սահմանի հստակ պահանջներ նախաձեռնողի կողմից տրամադրվող տեղեկատվության շրջանակի վերաբերյալ՝ մոտարկված թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 5(1) հոդվածին և Հավելված IV-ին:

Առաջարկություն 3. Կառավարությունը պետք է մշակի ՇՄԱԳ և Ռ-ԷԳ փորձաքննության պարտադիր իրավական ուժ ունեցող մեթոդաբանություն՝ հիմնված Գործողության շրջանակի վերաբերյալ ԵՄ ուղեցույցի, Նախնական գնահատման վերաբերյալ ԵՄ ուղեցույցի, ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ԵՄ ուղեցույցի և Կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության ինտեգրման մասին ԵՄ ուղեցույցի վրա:

Առաջարկություն 4. Ազգային ժողովը պետք է փոփոխություններ նախաձեռնի ՇՄԱԳ օրենքում՝ հանրային քննարկումների վաղ փուլում նախատեսվող գործունեությանն առնչվող ամբողջական և հավաստի տեղեկատվությունը հանրությանը հասանելի դարձնելու համար, ինչպես նշված է թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 6(3)(ա-գ) հոդվածում:



Առաջարկություն 5. Կառավարությունը պետք է սահմանի այն մարմինների հստակ ցանկը, որոնք պետք է մասնակցեն ՇՄԱԳ/ՌԷԳ գործընթացին՝ բնապահպանական ոլորտում իրենց պարտականությունների, իրավասությունների և պատասխանատվության բերումով, և ՇՄԱԳ/ՌԷԳ-ի վերաբերյալ կայացնեն որոշիչ եզրակացություն/կարծիք՝ իրենց պատասխանատվության և իրավասությունների շրջանակում, ինչը վերաբերելի է թիվ 2011/92/ԵՄ հրահանգին՝ տրամադրելով բավարար ժամանակ 6(1) հոդվածով սահմանված գործողությունների համար և ողջամիտ ժամկետ՝ բնապահպանական ոլորտի որոշումների կայացմանը արդյունավետ մասնակցելու համար (6(6)(բ) հոդված):

Առաջարկություն 6. Կառավարությունը պետք է ընդունի բովանդակային և ընթացակարգային իրավական ակտեր, որոնց հիման վրա սահմանված մարմինները կիրականացնեն պետական և մասնավոր նախագծերի, ինչպես նաև իրենց իրավասության ոլորտի նախագծերի և ծրագրերի ՇՄԱԳ:

Առաջարկություն 7. Կառավարությունը պետք է կատարի փոփոխություններ ՇՄԱԳ օրենքում և ՇՄԱԳ/ՌԷԳ-ին առնչվող՝ Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման մեջ՝ ստեղծելու հետադարձ կապի հստակ և ճանաչելի ընթացակարգ՝ հանրային լուսման ընթացքում ներկայացված դիտարկումները և առաջարկությունները հաշվի առնելու հարցում պատշաճ ջանասիրության գործադրումը հիմնավորելու համար:

2/ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի թիվ 2001/42/ԵՀ հրահանգ՝ շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին¹⁵

Այս հրահանգի հետևյալ դրույթները պետք է կիրարկված լինեին սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 3 տարվա ընթացքում.

Ներպետական օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի (մարմինների) սահմանում

Հիմնադրությային փաստաթղթերի (նախագծերի և ծրագրերի) ռազմավարական էկոլոգիական գնահատման գործընթացը սահմանված է ՇՄԱԳ օրենքով, ինչպես նաև ՌԷԳ և ՇՄԱԳ փորձաքննության վերաբերյալ Կառավարության որոշմամբ¹⁶ և շրջակա

¹⁵ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի հրահանգ թիվ 2001/42/ԵՀ՝ շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32001L0042>

¹⁶ Կառավարության 2024 թ. մայիսի 2-ի N 643-Ն որոշումը՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին <https://www.arlis.am/documentView.aspx?docid=192441>



միջավայրի նախարարի հրամանով ընդունված՝ ՌԷԳ իրականացման ուղեցույցով¹⁷, որի մանրամասները ներկայացված են ստորև:

Մինևույն ժամանակ լիազոր մարմնի իրավասություններին առնչվող համակարգային վարչական անհամապատասխանությունը, որը ներկայացված է պետական և մասնավոր նախագծերի ՇՄԱԳ-ի վերաբերյալ թիվ 2011/92/ԵՄ հրահանգի առնչությամբ իրականացված վերլուծության մեջ, լիովին վերաբերելի է նաև ռազմավարական Էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) ենթակա նախագծերի և ծրագրերի վերաբերյալ թիվ 2001/42/ԵՀ հրահանգի նկատմամբ: Մասնավորապես, Շրջակա միջավայրի նախարարության՝ օրենսդրորեն սահմանված կարողությունները զիջում են այդ նախարարության կողմից ազդեցության գնահատման ենթակա ռազմավարական ոլորտների կոմպլեքսայնությանը: Թիվ 2001/42/ԵՀ հրահանգին համապատասխանության առումով խիստ անբավարար իրավակարգավորումների, ինչպես նաև ՌԷԳ գործընթացում ներգրավված համապատասխան վարչական մարմինների շրջանակի հստակության բացակայության պատճառով, ՌԷԳ-ի իրականացման համար լիազոր մարմիններ նշանակելու պարտավորությունը կոպտորեն չի համապատասխանում ՀԸԳՀ-ով ստանձնած պարտավորություններին:

Ինչպես վերևում ընդգծվեց, սույն մշտադիտարկման զեկույցով ոչ մի կերպ կասկածի տակ չի դրվում իրենց մասնագիտացման ոլորտում ազդեցության գնահատում իրականացնող մասնագետների հմտությունները կամ կարողությունները, այլ ավելի շուտ մատնացույց է արվում այն փաստը, որ ռազմավարական ոլորտների բազմազանությունը և ՌԷԳ-ի ենթակա գործունեության տեսակների համալիր բնույթը մեծապես գերազանցում են ՌԷԳ-ի իրականացման համար պատասխանատու մարմնի՝ շրջակա միջավայրի նախարարության, վարչական իրավագործությունները: Մասնավորապես, ՇՄԱԳ-ի մասին օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված են ՌԷԳ-ի ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի (նախագծեր կամ ծրագրեր) ռազմավարական ոլորտները: Չնայած թվարկված հանրային քաղաքականության ոլորտների մեծ մասը դուրս է շրջակա միջավայրի նախարարության վարչարարական իրավասությունների շրջանակից (սոցիալ-տնտեսական զարգացում, էներգետիկա, քաղաքաշինություն, հանքարդյունաբերություն, հեռահաղորդակցություն, զբոսաշրջություն և այլն), գործող ՇՄԱԳ օրենքով ամրագրված կարգավորումների համաձայն այն հանդիսանում է միակ պետական կառույցը, որն իրականացնում է նախագծերի և ծրագրերի ՌԷԳ և դրանց վերաբերյալ ընդունում է որոշումներ: Հակառակ թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 6(3) հոդվածի պահանջի՝ սահմանված չեն հատուկ մարմիններ, որոնց հետ պետք է խորհրդակցել և որոնց, ելնելով շրջակա միջավայրին վերաբերող իրենց հատուկ պարտականություններից, վերաբերելի են

¹⁷ Շրջակա միջավայրի նախարարի 2024 թ. հոկտեմբերի 29-ի 438-Ն հրամանը ռազմավարական Էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ուղեցույցները հաստատելու մասին <https://www.arlis.am/documentview.aspx?docid=199014>



նախագծի կամ ծրագրի (հիմնադրույթային փաստաթղթի) իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունը:

ՌԷԳ-ի իրականացման ընթացքում հիմնադրույթային փաստաթղթի մշակումը նախաձեռնող վարչական մարմինը պարտավոր է խորհրդակցել համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, սակայն չկա օրենքով կարգավորվող մեխանիզմ, որով կապահովվի այդ գործընթացին այլ պատասխանատու գերատեսչությունների և հանրության բովանդակային մասնակցությունը՝ երաշխավորելով ազդեցության հուսալի և թափանցիկ գնահատում: Այս խնդիրն իր բնույթով շատ նման է ՇՄԱԳ-ի իրականացման հետ կապված ինստիտուցիոնալ բացերին: ՇՄԱԳ-ի մասին օրենքը՝ 2023 թվականի մայիսին կատարված փոփոխություններով, և 2023 թվականի դեկտեմբերին ընդունված՝ ՇՄԱԳ-ի/ՌԷԳ-ի իրականացման գործընթացը կարգավորող կառավարության որոշումը¹⁸ չեն նախատեսում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցությունների որևէ մեխանիզմ, այն դեպքում, երբ ներկայացված հիմնադրույթային փաստաթղթի գործողության ոլորտը դուրս է Շրջակա միջավայրի նախարարության մասնագիտական կարողությունների կամ իրավասությունների շրջանակից:

Ընթացակարգի սահմանում՝ որոշելու համար, թե որ նախագծերի կամ ծրագրերի համար է պահանջվում ռազմավարական էկոլոգիական գնահատում, և պահանջների սահմանում, որոնց համաձայն նման գնահատման ենթակա կլինեն այն նախագծերը կամ ծրագրերը, որոնց համար պարտադիր է ռազմավարական էկոլոգիական գնահատումը (Հոդված 3)

Այս նպատակի շրջանակում ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզը վերջնաորոշում է համարում «հստակ ընթացակարգի սահմանում որով կորոշվի, թե որ նախագծերի ու ծրագրերի համար է պահանջվում շրջակա միջավայրի ռազմավարական էկոլոգիական գնահատում»: Ճանապարհային քարտեզով սահմանված մեկ այլ նպատակ է «ՌԷԳ-ի շրջանակում շրջակա միջավայրին առնչվող հարցերի համար պատասխանատու մարմինների նշանակումը և հանրային խորհրդակցությունների պատշաճ սահմանված ընթացակարգի ապահովումը»: Այնուամենայնիվ, ի հեճուկս թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածի պահանջի՝ ՇՄԱԳ-ի մասին ՀՀ օրենքը և դրանից բխող վերոնշյալ ՇՄԱԳ/ՌԷԳ փորձաքննության մասին ենթաօրենսդրական ակտերը չեն նախատեսվում պարտադիր ՌԷԳ-ի ենթակա նախագծեր և ծրագրեր:

¹⁸ 2023 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված Կառավարության N 2343-Ն որոշում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պետական փորձաքննության վերաբերյալ հանրության իրազեկման և հանրային լսումներ անցկացնելու մասին» <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188064>



Գործնականում ՇՄԱԳ-ի մասին օրենքով սահմանված ռազմավարական ոլորտներում թվարկված նախագծերի և ծրագրերի համար ՌԷԳ-ի իրականացումը մշտապես անտեսվում է: Ավելին՝ կա կոնկրետ օրինակ, երբ ՌԷԳ իրականացնելու դիմումն անտեսվել է անգամ ի սկզբանե ՌԷԳ իրականացնելու համար նախատեսված փաստաթղթի առնչությամբ: Մասնավորապես, Համաշխարհային բանկի ֆինանսավորվամբ մշակված և 2023 թվականի մայիսին կառավարության կողմից ընդունված ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը¹⁹ ներպետական օրենսդրության համաձայն պետք է ենթակա լիներ ՌԷԳ-ի: Համաշխարհային բանկի՝ շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության ուսումնասիրության վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթում²⁰ միանշանակ կերպով նշվում է, որ «շրջակա միջավայրի մասին ներպետական օրենսդրությամբ պահանջվում է հանքարդյունաբերության ոլորտում քաղաքականության/ռազմավարական փաստաթղթերի առնչությամբ իրականացնել ռազմավարական էկոլոգիական գնահատում և պետական փորձաքննություն, որը պետք է իրականացվի առանձին՝ կառավարության կողմից: Այնուամենայնիվ, չնայած քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մշտական դիմումներին²¹, կառավարությունն ընդունել է այս ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը²²՝ հաջորդիվ իրականացնելով մի շարք օրենսդրական և ռազմավարական փոփոխություններ՝ առանց ՌԷԳ իրականացնելու: Այսպիսով, ՇՄԱԳ օրենքով նախագծերի և ծրագրերի շրջանակի մատնանշումը գործնականում չի հանգեցնում այդ ոլորտներում մշակված հիմնադրությային փաստաթղթերի (նախագծերի և ծրագրերի) ՌԷԳ-ի իրականացմանը:

Ավելին, ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ «նախագծի՝ ՌԷԳ-ի և փորձաքննության ենթակա լինելը որոշում է լիազոր մարմինը՝ հիմնադրությային փաստաթուղթը նախաձեռնողի հետ համատեղ խորհրդակցությունների արդյունքով»: Նմանապես, ՌԷԳ-ի իրականացման մասին

¹⁹ Համաշխարհային բանկի «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարություն-2» նախագիծ <https://projects.worldbank.org/pt/projects-operations/project-detail/P173686>

²⁰ Համաշխարհային բանկի «Շրջակա միջավայրի և սոցիալական վերլուծության հայեցակարգային ամփոփում», հայեցակարգի մշակման փուլ, մշակվել է/թարմացվել է՝ 29 ապրիլի 2020 թ. | Զեկույց համար՝ ESRSC01365 https://ewdata.rightsindevelopment.org/files/documents/86/WB-P173686_y5tC4R3.pdf

²¹ Արդյունահանող ոլորտներում շահագրգիռ կողմերի խմբի գործունեության թափանցիկության նախաձեռնությանը մասնակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հայտարարությունը ՀՀ կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի 750-Լ որոշմամբ հաստատված հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության՝ ռազմավարական էկոլոգիական գնահատում իրականացնելու պահանջի մասին <https://transparency.am/hy/media/news/article/4915?fbclid=IwAR0VBZmhdXdPako3tYvdYJDEHiA6XiHt8zQR6p8l7j4aWJT0iU-U-mL1RjY>

²² «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 750-Լ, ընդունված 2023 թ. մայիսի 11-ին <https://www.e-gov.am/gov-decrees/item/40374/>



վերջերս ընդունված ուղեցույցով²³ հաստատվում է, որ բոլոր տեսակի հիմնադրույթային փաստաթղթերը, առանց ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմնադրույթային փաստաթղթերի մասով բացառությունների, կարող են ենթակա լինել ՌԷԳ-ի միայն լիազոր մարմնի և հիմնադրույթային փաստաթուղթը մշակող մարմնի միջև խորհրդակցությունների արդյունքով: Ըստ այդմ, նախագծերն ու ծրագրերը կարող են լինել ՌԷԳ-ի ենթակա՝ ՌԷԳ իրականացնելու կամայական որոշման հիման վրա:

Համաձայն թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ պարտադիր ՌԷԳ-ի ենթակա համարվող նախագծերում և ծրագրերում աննշան փոփոխությունները, ինչպես նաև ՌԷԳ- իրականացնելու համար ոչ պարտադիր նախագծերի ու ծրագրերի պարագայում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում պահանջվում է միայն այն դեպքում, եթե պետությունը որոշի, որ դրանք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Սակայն ներպետական օրենսդրությունը չի պարունակում որևէ դրույթ կամ չափանիշ՝ շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցության նշանակալիությունը սահմանելու համար: Այսպիսով, ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածի դրույթները չեն համապատասխանում թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 3-5-րդ մասերին և դրա Հավելված II-ին, որին հղում է արվում թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 5-րդ մասում: Ենթադրվում է, որ նման անհամապատասխանության պատճառը ՌԷԳ-ի վերաբերյալ ոչ բավարար կարգավորումներն են և բնապահպանական կառավարման ոլորտում ոչ բավարար ինստիտուցիոնալ կարողությունները:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ վերջերս փոփոխված ՇՄԱԳ օրենքով (2023 թ. մայիս) և հետագայում (2023 թ. դեկտեմբերին) ընդունված իրավական ակտերով նախատեսված չէ ՌԷԳ իրականացնելու համար լիազորված մարմինների շրջանակը, ինչպես նաև պարտադիր ՌԷԳ-ի ենթակա նախագծերի և ծրագրերի ցանկը: Չկան շրջակա միջավայրի վրա էական ազդեցության հավանականությունը որոշելու իրավական մեխանիզմներ՝ ոչ փոքր փոփոխությունների, ոչ էլ նախագծերի և ծրագրերի անհատական ուսումնասիրության հիման վրա: Գործող կարգավորումներով նախատեսվում է հայեցողական ընթացակարգ, որով որոշվում է՝ արդյոք այս կամ այն նախագիծը կամ ծրագիրը ենթակա է ՌԷԳ-ի, թե ոչ:

²³ Շրջակա միջավայրի նախարարի 2024 թ. հոկտեմբերի 29-ի N 438-Ն հրամանը ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ուղեցույցները հաստատելու մասին <https://www.arlis.am/documentview.aspx?docid=199014>



Բնապահպանական ոլորտի հարցերով զբաղվող մարմինների հետ խորհրդակցությունների ընթացակարգի և հանրության հետ խորհրդակցությունների ընթացակարգի սահմանում (հոդված 6)

Համաձայն թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ նախագծի կամ ծրագրի նախնական տարբերակը պետք է խորհրդակցելու նպատակով տրամադրվի այնլիազորված մարմիններին, որոնց, ելնելով շրջակա միջավայրին վերաբերող իրենց պարտականություններից, կարող են վերաբերելի լինել նշված նախագծերի և ծրագրերի իրականացման բնապահպանական ազդեցությունները, ինչպես նշված է թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 6-րդ հոդվածի 3-րդ մասում: Բացի շրջակա միջավայրի նախարարությունից, որը համարվում է ՌԷԳ-ի իրականացման համար լիազոր մարմին, ՇՄԱԳ օրենքը չի սահմանում որևէ այլ համապատասխան մարմին: ՌԷԳ-ի վերաբերյալ վերջերս մշակված ուղեցույցը չի անդրադառնում համապատասխան մարմինների նշանակմանը և ՌԷԳ-ի իրականացման վերաբերյալ որոշում կայացնելու չափանիշներին վերաբերող հարցերին:

ՇՄԱԳ օրենքը և համապատասխան ենթաօրենսդրական կարգավորումները նախատեսում են հանրային խորհրդակցությունների ընթացակարգեր, որոնք նման են ՇՄԱԳ-ի ընթացակարգերին, չնայած դրանց միջև առկա են զգալի տարբերություններ՝ կապված հանրային խորհրդակցությունների քանակի և փուլերի, շահագրգիռ/ազդակիր համայնքների սահմանման և դրա հետ կապված արդարադատության մատչելիության, ինչպես նաև անհամաչափ լայն շրջանակի բնակչության ծանուցման հետ և այլն: Այդ պատճառով գործող կանոնակարգերը չեն համապատասխանում թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 6-րդ հոդվածի 4-րդ մասին, որով նախատեսվում է առանձնացնել ազդակիր կամ հնարավոր ազդեցության ենթարկվող հանրությանը և ժամանակին և արդյունավետ հնարավորություն ընձեռել նրանց՝ արտահայտելու իրենց կարծիքը նախագծի կամ ծրագրի նախնական տարբերակի և կից շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության վերաբերյալ:

Տեղեկատվության փոխանակման և խորհրդակցությունների մեխանիզմների սահմանումայն անդամ պետությունների հետ, որոնց շրջակա միջավայրը կարող է էական ազդեցություն կրել նախագծից կամ ծրագրից (Հոդված 7)

Այս հոդվածը կիրառելի չէ ԵՄ անդամ պետությունների նկատմամբ, քանի որ Հայաստանը ընդհանուր սահման չունի ԵՄ անդամ երկրներից որևէ մեկի հետ:

Ինչ վերաբերում է այլ հարևան երկրների պարագայում հնարավոր անդրսահմանային ազդեցությանը, ապա ՇՄԱԳ-ի մասին օրենքը նախատեսում է բավարար կարգավորումներ անդրահամանային ազդեցությունը պատշաճ գնահատելու համար՝



միևնույն ժամանակ նկատի ունենալով վերը նշված ընդհանուր իրավական և ինստիտուցիոնալ խնդիրները:

ՀԸԳՀ-ի թիվ 2001/42/ԵՀ հրահանգին վերաբերելի հողվածների պահանջների կատարման վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ

Եզրափակելով՝ կարող ենք նշել, որ ՇՄԱԳ օրենքը՝ 2023 թ. մայիսին կատարված փոփոխություններով, չի բավարարում 2001/42/ԵՀ հրահանգի մի շարք պահանջների: Մասնավորապես՝ օրենքով չեն սահմանվում լիազոր մարմինները, ում հետ կանցկացվեն խորհրդակցություններ՝ ելնելով շրջակա միջավայրին վերաբերող իրենց հստակ լիազորություններից, ինչպես նաև չի սահմանվում խորհրդակցությունների իրականացման պատշաճ ընթացակարգ (2001/42/ԵՀ, հոդված 6 (1-3)), չի նախատեսվում պարտադիր ռազմավարական էկոլոգիական գնահատման ենթակա նախագծերի կամ ծրագրերի ցանկը (հոդված 3(2)(բ)), ինչպես նաև չկա հստակ ընթացակարգ՝ որով կորոշվի, թե որ նախագծերն ու ծրագրերն են ենթակա ՌԷԳ-ի՝ հիմնվելով հավանական ազդեցությունների նշանակալիության գնահատման չափանիշների վրա (հոդված 3(5)):

Նույնիսկ վերջերս փոփոխված և ընդունված օրենսդրությունը չի համապատասխանում ՀԸԳՀ-ով սահմանված ԵՄ հրահանգների կիրառելի դրույթներին: Այդպիսով, նույնիսկ եթե ընդունված կարգավորումներն ուղղված են ՀԸԳՀ-ի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարմանը, բովանդակային առումով դրանք չեն համապատասխանում ԵՄ գործող կարգավորումներին:

Առաջարկություն 1. Կառավարությունը պետք է նշանակի լիազոր մարմիններ՝ ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում նշված ռազմավարական ոլորտներում ՌԷԳ իրականացնելու համար, որոնք, շրջակա միջավայրին վերաբերող իրենց առանձնահատուկ պարտականությունների բերումով, վերաբերելի են նախագծի կամ ծրագրի իրականացման բնապահպանական ազդեցությունները, ինչպես նշված է թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 6-րդ հոդվածի 3-րդ մասում:

Առաջարկություն 2. Կառավարությունը և/կամ Ազգային ժողովը պետք է օրենսդրական փոփոխություններ նախաձեռնեն ՇՄԱԳ-օրենքում՝ սահմանելու ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետում նշված ռազմավարական ոլորտները՝ որպես պարտադիր ՌԷԳ-ի ենթակա, համաձայն թիվ 2001/42/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 2-րդ մասի: Նույն փոփոխություններով պետք է սահմանվեն չափորոշիչներ՝ որոշելու նախագծերի և ծրագրերի տեսակները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի ուսումնասիրության սկզբունքով: Թիվ 2001/42/ԵՀ հրահանգի II հավելվածով սահմանված ազդեցությունների հավանական նշանակալիությունը որոշելու չափանիշները պետք է հաշվի առնվեն նախագծերի և



ծրագրերի (հիմնադրույթային փաստաթղթերի) անհատական ուսումնասիրության չափանիշները որոշելիս:

Առաջարկություն 3. 2023 թ. դեկտեմբերի 28-ին ընդունված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պետական փորձաքննության վերաբերյալ հանրային ծանուցման և հանրային լուսմների մասին ՀՀ կառավարության 2343-Ն որոշման մեջ պետք է փոփոխություններ իրականացնել և ներառել նախագծերի և ծրագրերի (հիմնադրույթային փաստաթղթերի) ՌԷԳ-ի հստակ ընթացակարգ՝ հիմնված թիվ 2001/42/ԵՀ հրահանգի իրականացման ուղեցույցի վրա, ինչպես նշված է Առաջարկությունների 1-ին և 2-րդ մասերում²⁴:

3/Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի թիվ 2003/4/ԵՀ հրահանգը բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիության մասին, որով չեղյալ է համարվում Խորհրդի թիվ 90/313/ԵՏՀ հրահանգը²⁵

Այս հրահանգի հետևյալ կետերը պետք է կիրարկված լինեն սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 3 տարվա ընթացքում.

Ներպետական օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի (մարմինների) սահմանում

ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզով նախատեսվում է փոփոխություններ կատարել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում²⁶ «բնապահպանական տեղեկատվություն» եզրույթի սահմանման և այլ համապատասխան նորմատիվ ակտերի կատարելագործման նպատակով, որոնք ուղղված են բնապահպանական տեղեկատվության մատչելիության ապահովմանը և տեղեկատվության տրամադրման հստակ ընթացակարգերի սահմանմանը: Սակայն օրենքում նախատեսվող փոփոխությունները չեն կատարվել: Օրենքն ընդունվել է 2003 թվականին, և այն երկու փոփոխությունները, որոնք կատարվել են 2023 և 2024 թվականներին, վերաբերում են բանկային, առևտրային գաղտնիքների և նախաքննության վերաբերյալ գաղտնի

²⁴ Եվրոպական հանձնաժողով, շրջակա միջավայրի հարցերով գլխավոր տնօրինություն, որոշակի նախագծերի և ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին թիվ 2001/42 /ԵՀ հրահանգի կիրարկում <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/7c2796c8-2786-4faf-bafd-e7bb93082b16>

²⁵ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի թիվ 2003/4/ԵՀ ԵՄ հրահանգ՝ շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հանրային մատչելիության մասին, որով ուժը կորցրած է ճանաչվում Խորհրդի 90/313/ԵՏՀ հրահանգը <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32003L0004>

²⁶ ՀՀ օրենքը տեղեկատվության ազատության մասին <http://www.parliament.am/legislation.php?sel=alpha<ype=3&lang=eng>



տեղեկատվության մատչելիության սահմանափակումներին, որոնք կապված չեն բնապահպանական հարցերի հետ²⁷:

Տեղեկատվության (այդ թվում՝ բնապահպանական տեղեկատվության) տրամադրման մեխանիզմը կարգավորվում է Կառավարության որոշմամբ²⁸, որն ընդունվել է ՀԸԳՀ-ի ստորագրումից շատ առաջ և չի նպաստում ՀԸԳՀ-ի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիությանն ուղղված գործնական մեխանիզմների սահմանումը և կիրառելի բացառությունները (3-րդ և 4-րդ հոդվածներ)

Ինչպես և նախորդ բաժնում, Ճանապարհային քարտեզով նախատեսվել է ձեռնարկել գործնական միջոցներ՝ բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիությունն ապահովելու և կիրառելի բացառությունները սահմանելու համար: Այս պարտավորությունը պատշաճ կերպով չի կատարվել այնպես, ինչպես պետք է արվեր՝ Տեղեկատվության ազատության մասին օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով: Հաշվի առնելով, որ չեն կատարվել ակնկալվող օրենսդրական փոփոխությունները, որոնք ուղղված են դիմումի հիման վրա բնապահպանական տեղեկատվության մատչելիության ապահովման հարցերի կարգավորմանը, պետք է նշել, որ ապահովված չէ համապատասխանությունը թիվ 2003/4/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 3-5-րդ կետին: Այն վերաբերում է տեղեկատվության տրամադրման մեթոդներին, ձևերին և ձևաչափերին, ինչպես նաև պատասխանատու պետական մարմինների համար սահմանված հատուկ պայմաններին և պարտավորություններին:

Պետական մարմինների կողմից բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիության ապահովումը (հոդված 3 (1))

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներն ²⁹ ընդգրկում են տեղեկատվության մատչելիության իրավունքի և դրա սահմանափակումների ընդհանուր շրջանակը: Նշվում է նաև, որ տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե այն վերաբերում է շրջակա միջավայրի իրավիճակին: Այնուամենայնիվ, այս ոլորտի ընդհանրական կարգավորումների արդյունքում չեն կանխվում լիազոր մարմինների՝ տեղեկատվությունը տրամադրելու

²⁷ Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի փոփոխություններ <http://www.parliament.am/legislation.php?sel=alpha<ype=3&lang=arm#30>

²⁸ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի որոշում 1204-ն տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147567>

²⁹ Տեղեկատվության ազատության մասին օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1372>



կամ տրամադրումը մերժելու հարցում հայեցողական մեկնաբանումները, ինչը հաճախ հանգեցնում է դատական վեճերի³⁰:

Ի տարբերություն նախորդ երկու բաժինների, որոնք ենթադրում էին, որ Տեղեկատվության ազատության մասին գործող օրենքում փոփոխությունները թույլ կտան կատարել այս պարտավորությունը, նախատեսվում էր նաև մշակել և ընդունել բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին առանձին օրենք՝ բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիությունն ապահովելու համար՝ համաձայն թիվ 2003/4/ԵՀ 3-րդ հոդվածի 1-ին մասի: Սակայն, ինչպես նախորդ դեպքերում, այս օրենքը նույնպես չի ընդունվել: Այսպիսով, այս պարտավորությունը նույնպես պատշաճ կերպով չի կատարվել:

Բնապահպանական տեղեկատվության տրամադրումը մերժելու կամ միայն մասնակի տեղեկատվություն տրամադրելու մասին որոշումների վերանայման ընթացակարգերի սահմանում (հոդված 6)

Ճանապարհային քարտեզի համաձայն՝ բնապահպանական տեղեկատվության մերժման կամ մասնակի տրամադրման վերանայման ընթացակարգ սահմանելու պարտավորության պատշաճ կատարումը նույնպես պետք է պայմանավորված լիներ Բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ: Հաշվի առնելով, որ ոչ այս օրենքը, ոչ էլ այն լրացնող իրավական ակտերը չեն ընդունվել, ճանապարհային քարտեզի համատեքստում այս պարտավորությունը պետք է համարել չկատարված:

Սակայն գործող օրենսդրությամբ նախատեսվում են մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս վարչական և դատական կարգով վերանայել տեղեկատվության տրամադրման ապօրինի մերժումը: Ինչպես վերևում նշվեց, գործնականում կան մի քանի հաջողված օրինակներ, երբ հասարակական կազմակերպություններին և լրատվամիջոցներին հաջողվել է պետական մարմիններին ստիպել տրամադրել պահանջվող տեղեկատվությունը դատական հայցի միջոցով:

Հանրության շրջանում բնապահպանական տեղեկատվության տարածման համակարգի ստեղծում (Հոդված 7)

Ինչպես բնապահպանական տեղեկատվության տրամադրման պարտավորությունների վերաբերյալ այլ բաժինների դեպքում, այստեղ ևս բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին սպասվող նոր օրենքը դիտվում էր որպես կարգավորող շրջանակ՝ ճանապարհային քարտեզի թիվ 91.5 միջոցառման համաձայն

³⁰ Միվիլեթն ու Թրանսփարենսի ինթերնեշնլը դատարանում հաղթել են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին <https://www.civilnet.am/news/667796/>



տեղեկատվության տարածման համակարգ ստեղծելու համար: Եվ այս օրենքի մշակման և ընդունման ձախողումը խաթարել է նաև այս պարտավորության պատշաճ կատարումը, քանի որ այս նպատակի ակնկալվող վերջնարդյունքը պետք է լիներ համակարգի օրենսդրական կարգավորումը և բնապահպանական տեղեկատվության մատչելիությունն ապահովող մեխանիզմների ներդրումը:

Ինչպես և վերանայման մեխանիզմներին վերաբերող բաժնում, այստեղ ևս պարտավորության իրականացման ակնհայտ ձախողումը պայմանավորված է ճանապարհային քարտեզով նախատեսված օրինաստեղծ գործունեության բացակայությամբ: Հիմնվելով թիվ 2003/4/ԵՀ հրահանգի 7-րդ հոդվածի վրա՝ հարկ է նշել, որ քաղաքականությունները, առաջընթացի հաշվետվությունները, շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրությունները և շրջակա միջավայրի վերաբերյալ այլ տեղեկությունները հանրային հեռահաղորդակցության ցանցերի միջոցով համակարգված կերպով տարածվում են շրջակա միջավայրի նախարարության և այլ գերատեսչությունների կայքերում: Այնուամենայնիվ, դժվար է գնահատել, թե տարբեր աղբյուրներում առկա բնապահպանական տեղեկատվությունը որքանով է համապատասխանում թիվ 2003/4/ԵՀ հրահանգի 7-րդ հոդվածի 1-6-րդ մասերի բոլոր պահանջներին՝ ներառյալ շրջակա միջավայրի վերաբերյալ մատչելի, թարմացվող և հուսալի տեղեկատվության նվազագույն ցանկի առկայությունը, քանի որ դրա համար կպահանջվի ուսումնասիրել էլեկտրոնային տվյալների բոլոր համապատասխան շտեմարանները: Բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին ակնկալվող օրենքը և դրանից բխող կարգավորումները կարող էին անհրաժեշտ գործիք լինել թիվ 2003/4/ԵՀ հրահանգի 7-րդ հոդվածով սահմանված պահանջների համապարփակ մոտարկման իմաստով:

Եզրակացություններ և առաջարկություններ ՀԸԳՀ-ի թիվ 2001/4/ԵՀ հրահանգին վերաբերելի հոդվածների պահանջների կատարման վերաբերյալ

ՀԸԳՀ-ի իրականացման ճանապարհային քարտեզում հակիրճ նկարագրված են այն միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն բնապահպանական տեղեկատվության մատչելիության վերաբերյալ օրենսդրությունը մոտարկելու համար, մասնավորապես՝ «բնապահպանական տեղեկատվություն» եզրույթը սահմանելու համար համապատասխան օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին օրենքի ընդունումը: Նմանապես, բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին նոր օրենքի ընդունումը դիտարկվել է որպես ճանապարհային քարտեզի համաձայն տեղեկատվության տարածման համակարգ ստեղծելու համար նորմատիվ հիմք: Հաշվի առնելով, որ նշված օրենսդրական փոփոխությունները չեն կատարվել, բնապահպանական տեղեկատվության մատչելիությանը վերաբերող ամբողջ բաժինը չի համապատասխանում թիվ 2003/4/ԵՀ հրահանգի կիրառելի դրույթներին, ինչպես նշված է ՀԸԳՀ-ի III հավելվածում:



Առաջարկություն 1. Ազգային ժողովը պետք է ընդունի բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին նոր օրենք, որը պատշաճ և համապարփակ կերպով կկարգավորի շրջակա միջավայրի վերաբերյալ հարցմամբստացվող տեղեկատվության մատչելիության ընթացակարգերը՝ ներառյալ տեղեկատվության տրամադրման եղանակները, ձևերն ու ձևաչափերը, ինչպես նաև պետական լիազոր մարմինների համար սահմանված հատուկ պայմաններն ու պարտավորությունները (2003/4/ԵՀ, հոդված 3): Առաջարկվող նոր օրենքով պետք է նաև սահմանվի բնապահպանական տեղեկատվության տարածման համակարգի ստեղծումը և բացահայտման ենթակա տեղեկատվության շրջանակը (2003/4/ԵՀ, հոդված 7): Պետք է սահմանվեն նաև բնապահպանական տեղեկատվության տրամադրումը մերժելու կամ մասնակի տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ որոշումների վերանայման հստակ ընթացակարգեր (թիվ 2003/4/ԵՀ հրահանգ, հոդված 6):

4/Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կողմից 2003 թվականի մայիսի 26-ին ընդունված թիվ 2003/35/ԵՀ հրահանգ, որով նախատեսվում է հանրության մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի և ծրագրերի մշակմանը և փոփոխություններ են մտցվում խորհրդի թիվ 85/337/ԵՏՀ և թիվ 96/61/ԵՀ հրահանգներում, որոնք վերաբերում են հանրային մասնակցությանը և արդարադատության մատչելիությանը³¹

Այս հրահանգի հետևյալ կետերը պետք է կիրարկված լինեն ՀԸԳ համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 3 տարվա ընթացքում.

Ներպետական օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի (մարմինների) սահմանում

Ինչպես նշվել է վերևում, լիազոր մարմինների կողմից իրականացվող ԾՄԱԳ-ի/ՌԷԳ-ի ինստիտուցիոնալ համակարգը բարեփոխման կարիք ունի: Ընդհանուր խնդիրների կողքին կան նաև ոլորտային անհամապատասխանություններ, որոնք կապված են մասնավորապես ՌԷԳ-ի ընթացակարգերի հետ: Հատկանշական է, որ ներպետական օրենսդրությունը չի սահմանում նախագծերի կամ ծրագրերի ՌԷԳ-ի ընթացքում հանրային խորհրդակցությունների առաջին փուլում հանրային մասնակցության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմինների նշանակման

³¹ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կողմից 2003 թ. մայիսի 26-ին ընդունված հրահանգ 2003/35/ԵՀ, որով նախատեսվում է հանրային մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի և ծրագրերի մշակմանը և փոփոխություններ են մտցվում Խորհրդի 85/337/ԵՏՀ և 96/61/ԵՀ հրահանգներում, որոնք վերաբերում են հանրային մասնակցությանը և արդարադատության մատչելիությանը. հանձնաժողովի հայտարարությունը <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32003L0035>



չափանիշները: Միակ չափանիշը, որով սահմանվում է այն լիազոր մարմինների հավանական շրջանակը, որոնք պատասխանատու են լինելու ՌԷԳ-ի ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի մշակման համար, վերը նշված ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածում թվարկված ռազմավարական ոլորտների շրջանակն է: Այնուամենայնիվ, գործող ներպետական օրենսդրությունը չի պարունակում որևէ պահանջ կամ մեխանիզմ, որը թույլ կտա այդ մարմիններին տեղեկացնել հանրությանը, կազմակերպել հանրային խորհրդակցություններ կամ ցանկացած փուլում մասնակցել ՌԷԳ-ի գործընթացին: Հետևաբար, պետական մարմինները, որոնք պատրաստում են հիմնադրույթային փաստաթղթեր, որոնք ենթադրաբար կարող են ենթակա լինել ՌԷԳ-ի (ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածում թվարկված լինելու բերումով), չեն կարող համարվել լիազոր մարմին, որը պատասխանատու է նման նախագծերի առաջարկների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը մատչելի դարձնելու համար՝ թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով:

ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզի թիվ 92.1 միջոցառման համաձայն՝ ԵՄ «Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիքի» (TAIEX) և ԹՎԻՆԻՆԳ նախագծերի շրջանակում համապատասխան գերատեսչությունների ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդումը պետք է հանգեցնել ՌԷԳ իրականացման համար լիազոր մարմինների հստակեցման նպատակի իրականացմանը: Այնուամենայնիվ, նախորդ բաժիններում նշված վարչական պարտականություններին և կարողություններին առնչվող համակարգային ինստիտուցիոնալ անհամապատասխանություններն այդ գործիքներն անբավարար են դարձնում լիազոր մարմինների հիմնախնդրին առնչվող արմատական հակասությունները լուծելու համար: Այս կապակցությամբ հարկ է ևս մեկ անգամ նշել, որ ՇՄԱԳ/ՌԷԳ իրականացնող լիազոր մարմինների հետ կապված իրավական և ինստիտուցիոնալ խնդիրներին առնչվող վերոնշյալ բոլոր դատողությունները վերաբերելի են նաև թիվ 2003/35/ԵՀ հրահանգին համապատասխանության գնահատմանը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ ներպետական օրենսդրությունը չի սահմանում լիազոր մարմինների/հաստատությունների շրջանակը կամ այս հարցի վերաբերյալ հանրային խորհրդակցությունների որևէ մեխանիզմ, չնայած որ նախագծերն ու ծրագրերը (հիմնադրույթային փաստաթղթերը, համաձայն ներպետական օրենսդրության տերմինաբանության) ռազմավարական փաստաթղթեր են, որոնք մշակվել են տարբեր պետական մարմինների կողմից: Ըստ այդմ, հանրությունը գրկված է «նախագծերի կամ ծրագրերի մշակմանը, փոփոխմանը կամ վերանայմանը ժամանակին և արդյունավետ մասնակցելու հնարավորությունից», որը բխում է թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի առաջին կետից:

Հանրությանը տեղեկատվության տրամադրման մեխանիզմի ստեղծում (հոդվածներ 2.2.1 և 2.2.4)



Ի տարբերություն կիրառելի ԵՄ հրահանգների՝ ներպետական օրենսդրական կարգավորումները սահմանում են ծանուցման և հետագա հանրային խորհրդակցությունների նմանատիպ մեխանիզմ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր նախագծերի համար, որոնք ենթակա են ՇՄԱԳ-ի, և նույնն էլ ՌԷԳ-ի ենթակա նախագծերի և ծրագրերի համար: Թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի և թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հանրությանը տեղեկատվություն տրամադրելու մեխանիզմը սահմանվում է ՇՄԱԳ-ի մասին օրենքի 28-րդ հոդվածի 4-7-րդ կետերով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով: Ինչպես արդեն նշվել է, հանրության հետ խորհրդակցությունների առաջին փուլը պետք է նախաձեռնվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ համաձայն ՇՄԱԳ-ի մասին օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի ընդհանուր դրույթի:

Մասնավորապես, նախագծերի և ծրագրերի ՌԷԳ-ի համար տեղական ինքնակառավարման մարմինները և շրջակա միջավայրի նախարարությունը (Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի միջոցով) պատասխանատու են հանրությանը տեղեկացնելու և հանրության հետ խորհրդակցություններ կազմակերպելու համար, ինչն առաջացնում է զգալի ինստիտուցիոնալ հակասություններ: Իրավական կարգավորումների շրջանակը, այսպիսով, հաշվի չի առնում այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող համարվել լիազոր մարմին՝ թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին ենթակետի իմաստով, քանի որ ՌԷԳ-ի ենթակա նախագծերն ու ծրագրերը (հիմնադրությային փաստաթղթերը) հիմնականում մշակվում են պետական այլ հաստատությունների կողմից:

Ավելին՝ երկու հանրային լուսմներից առաջինը տեղի է ունենում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության տրամադրման փուլում, ինչպես սահմանված է ՇՄԱԳ օրենքի 16-րդ հոդվածով և վերնագրված է «Տեղական ինքնակառավարման մարմնի (մարմինների) կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրումը»: Չնայած այն հանգամանքին, որ այս մեխանիզմն անհամատեղելի է ՌԷԳ-ի իրականացման հետ այն նախագծերի և ծրագրերի համար, որոնք կապված չեն տեղական ինքնակառավարման խնդիրների հետ, ինչպես օրենսդրությունը, այնպես էլ ինստիտուցիոնալ համակարգը չեն նախատեսում առաջին փուլում ՌԷԳ-ի իրականացման այլ գործող ընթացակարգ:

Այս առումով, նախագծերի և ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման և խորհրդակցությունների մասով գործող ներպետական կարգավորումները և ինստիտուցիոնալ համակարգը շատ անկատար են և չեն համապատասխանում թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին ենթակետի պահանջներին,



որով նախատեսվում է, որ հանրությունը պետք է իրազեկված լինի նման նախագծերի կամ ծրագրերի առաջարկների, ինչպես նաև դրանց փոփոխությունների կամ վերանայման մասին: Այն մասնավորապես ներառում է տեղեկատվություն որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքի, ինչպես նաև այն լիազոր մարմնի մասին, որին կարող են ներկայացվել կարծիքներ կամ հարցեր: Արդյունքում պետական մարմիններն անտեսում են ՇՄԱԳ-ի մասին օրենքի 21-րդ հոդվածի առաջին կետի համաձայն մի շարք նախագծերի և ծրագրերի համար ՌԷԳ-ի իրականացման ոչ հստակ իրավական պահանջները, ինչպես, օրինակ, վերը նշված հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության դեպքում է եղել:

Հանրային խորհրդակցությունների իրականացման մեխանիզմի ստեղծում (2(2)(բ) և 2(3)) հոդվածներ

Ինչպես նշվել է վերևում՝ ինչպես ՇՄԱԳ-ի, այնպես էլ ՌԷԳ-ի ընթացակարգերի համար հանրային խորհրդակցությունների ընդհանուր մեխանիզմը սահմանվում է ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածով՝ 16-րդ հոդվածի հետ համատեղ, ինչպես նաև վերը թվարկված ենթաօրենսդրական կարգավորումներով: Թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ներպետական օրենսդրությամբ հանրությանն իրավունք է տրվում մեկնաբանություններ և կարծիքներ հայտնել նախքան որոշումների ընդունումը, երբ բոլոր տարբերակները բաց են: Այնուամենայնիվ, այս ընթացակարգով չեն կարգավորվում նախագծերի և ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման և խորհրդակցությունների անցկացման հատուկ պահանջները, ինչը, հետևաբար, գործնականում բացասական հետևանքներ է ունենում:

ՀԸԳՀ-ի իրականացման ճանապարհային քարտեզի 92-րդ հոդվածի 1-4-րդ կետի համաձայն՝ նախատեսվում էր իրականացնել իրավական վերլուծություն և սահմանել հանրային մասնակցության և խորհրդակցությունների պահանջներ և մեխանիզմներ ՌԷԳ-ի ենթակա նախագծերին և ծրագրերին վերաբերող ԵՄ դրույթների պատշաճ կատարման համար: Այնուամենայնիվ, 2023 թվականի մայիսին ՇՄԱԳ օրենքում կատարված փոփոխություններով պատշաճ կերպով չի կարգավորվում ՌԷԳ-ի ընթացակարգը նախագծերի և ծրագրերի համար: Հետևաբար, ՇՄԱԳ օրենքով կարգավորվող հանրային խորհրդակցությունների ամբողջ մեխանիզմը չի համապատասխանում թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դրույթին:

Թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը՝ վերը նշված խորհրդակցություններին մասնակցելու իրավունք ունեցողներին նույնականացնելու վերաբերյալ, ներպետական օրենսդրությամբ կարգավորվում է ընդհանրական կերպով առանց հաշվի առնելու նախագծերի և ծրագրերի համար ՌԷԳ ընթացակարգի առանձնահատկությունները:



Նմանապես, համապատասխան խմբերի նույնականացումը՝ ներառյալ հասարակական կազմակերպությունները, որոնք բավարարում են ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչպես նշված է թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 3-րդ կետում, նույնիսկ կիրառելի չէ, քանի որ դրա համար համապատասխան ընթացակարգային մեխանիզմ չի ստեղծվել: Այսպիսով, ներպետական օրենսդրությունը և ինստիտուցիոնալ համակարգը չեն համապատասխանում թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի և 3-րդ կետի պահանջներին, քանի որ դեռևս չի ստեղծվել գործող իրավական մեխանիզմ և ինստիտուցիոնալ հիմք:

Որոշումների կայացման գործընթացում հանրության կողմից՝ հաշվի առնման ենթակա դիտողությունների և կարծիքների տրամադրման մեխանիզմի ստեղծում (2(2)(գ)) հոդված

ՇՄԱԳ-ի մասին օրենքի 29-րդ հոդվածը, որը վերնագրված է «հանրային լուսմների իրականացումը և առաջարկությունների ներկայացումը», ներառում է հանրության կարծիքը պատշաճ կերպով հաշվի առնելու պահանջը: Ըստ այդմ, լիազոր մարմինը (Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնը) և նախաձեռնողը պետք է հաշվի առնեն շահագրգիռ անձանց կողմից ներկայացված բոլոր առաջարկությունները, մեկնաբանությունները և կարծիքները: Բացի այդ, անձը կարող է գրավոր և բանավոր կերպով ներկայացնել իր դիտարկումները ՇՄԱԳ/ՌԷԳ ողջ գործընթացի ընթացքում: Ավելին, 29-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսվում է, որ նախաձեռնողը և լիազոր մարմինը պետք է դիտարկեն լուսմների ընթացքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները: Չդիտարկելու դեպքում պետք է ներկայացվեն հիմնավոր պատճառաբանումներ:

Սակայն այս դրույթը չի պաշտպանվում պատշաճ մեխանիզմով, որը թույլ կտար հետևել պետական մարմինների կամ նախաձեռնողի կողմից հանրության բովանդակալից դիտարկումներն հաշվի առնելու հարցում ցուցաբերվող պատշաճ վարքագիծը: ՇՄԱԳ օրենքն ու դրանից բխող կառավարության որոշումը³² կամ նախարարի հրամանը³³, որոնցով կարգավորվում է հանրային խորհրդակցությունների ընթացակարգը, չեն սահմանում հետադարձ կապի ընթացակարգ՝ շահագրգիռ հանրության կողմից ներկայացված առաջարկները, կարծիքներն ու դիտարկումները հաշվի առնելու հարցում որոշում կայացնող մարմինների պատշաճ վարքագիծը գնահատելու կամ վերահսկելու համար:

³² Կառավարության 2023 թ. դեկտեմբերի 28-ի 2343-Ն որոշումը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պետական փորձաքննության վերաբերյալ հանրության իրազեկման և հանրային լուսմներ իրականացնելու մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188064>

³³ Շրջակա միջավայրի նախարարի 2024 թ. հոկտեմբերի 29-ի համար 438-Ն հրամանը ռազմավարական Էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները (ՇՄԱԳ) հաստատելու մասին <https://www.arlis.am/documentview.aspx?docid=199014>



Ինչպես նախորդ պարտավորության դեպքում, ՀԸԳՀ-ի իրականացման ճանապարհային քարտեզի 92.4 կետը, որով նախատեսվում է իրականացնել օրենսդրության փոփոխություններ, ներառում է հանրային մասնակցության և խորհրդատվության պատշաճ մեխանիզմների ընդունում: Այնուամենայնիվ, ՇՄԱԳ-ի մասին փոփոխված օրենքը և դրան կից ենթաօրենսդրական ակտերը չեն անդրադառնում այս խնդրին, չնայած քաղաքացիական հասարակությունն այն պարբերաբար բարձրացնում է:

Այսպիսով, ներպետական կարգավորումները և ինստիտուցիոնալ համակարգը չեն համապատասխանում թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետին, որով նախատեսվում է, որ նախագծերի և ծրագրերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն հանրային մասնակցության արդյունքները:

Թիվ 2011/92/ԵՄ հրահանգի 9-րդ հոդվածի 2-րդ (բ) ենթակետի առնչությամբ կատարված վերլուծությունը ամբողջությամբ վերաբերելի է նաև թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պարտավորությանը:

Այս գործընթացներում հանրության (ներառյալ՝ ՀԿ-ների) համար արդյունավետ, ժամանակին և ոչ ծախսատար արդարադատության մատչելիության երաշխավորումը վարչական և դատական մակարդակներում (3-րդ հոդվածի 7-րդ կետի և 4-րդ հոդվածի 4-րդ կետ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և աղտոտվածության ինտեգրված կանխարգելում և վերահսկողություն):

Այս ընթացակարգերի շրջանակում հանրության (ներառյալ ՀԿ-ների) համար արդարադատության մատչելիությունը ենթակա է դատական համակարգի մշտադիտարկման թեմատիկ շրջանակին: Հետևաբար, սույն փաստաթղթում թիվ 2003/35/ԵՀ 3-րդ հոդվածի 7-րդ կետի և 4-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն պարտավորությունների պատշաճ կատարումը չի մշտադիտարկվելու:

ՀԸԳՀ-ի՝ թիվ 2001/4/ԵՀ-ի հրահանգին վերաբերելի հոդվածների իրականացման վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ

Ներպետական օրենսդրությունը չի սահմանում հանրային խորհրդակցությունների կազմակերպման համար պատասխանատու լիազոր մարմինների շրջանակը՝ ներառյալ նախագծերի և ծրագրերի (հիմնադրույթային փաստաթղթեր՝ համաձայն ներպետական օրենսդրության տերմինաբանության) մասին հանրության ծանուցման համար



պատասխանատու լիազոր մարմիններին: Քանի որ ՌԷԳ-ի ենթակա ռազմավարական փաստաթղթերը մշակվում են տարբեր պետական մարմինների կողմից, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես սահմանված է ՇՄԱԳ-ի մասին օրենքով, չեն կարող համարվել լիազոր մարմիններ տարբեր գերատեսչությունների իրավասություններին վերաբերող նախագծերի և ծրագրերի հանրային քննարկումների կազմակերպման համար (ինչպես բխում է ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածի առաջին կետում նշված ռազմավարական ոլորտներից):

ՇՄԱԳ օրենքը սահմանում է նույնանման հանրային խորհրդակցությունների ընթացակարգ ինչպես ՇՄԱԳ-ի ենթակա հանրային և մասնավոր նախագծերի, այնպես էլ ՌԷԳ-ի ենթակա նախագծերի և ծրագրերի համար: Այնուամենայնիվ, ՌԷԳ-ի հետ կապված կարգավորումները և ինստիտուցիոնալ համակարգը սկզբունքորեն տարբերվում են ՇՄԱԳ-ի ընթացակարգերից: Հանրությանը տեղեկատվության տրամադրման և հանրության հետ խորհրդակցությունների կազմակերպման մեխանիզմները պատշաճ կերպով սահմանված չեն նախագծերի և ծրագրերի ՌԷԳ-ի համար, ինչը գործնականում բացասական հետևանքներ է ունենում:

Առաջարկություն 1. Ազգային ժողովը պետք է նախաձեռնի ՇՄԱԳ օրենքում օրենսդրական փոփոխություններ, որպեսզի հստակ կարգավորի նախագծերի և ծրագրերի ՌԷԳ-ի իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը՝ հաշվի առնելով ՌԷԳ-ի և ՇՄԱԳ-ի ընթացակարգերի միջև հիմնարար տարբերությունները:

Առաջարկություն 2. Կառավարությունը պետք է ընդունի նախագծերի և ծրագրերի վերաբերյալ հանրային ծանուցման և խորհրդակցությունների հետ կապված ընթացակարգային կանոնակարգեր, որոնցով կնույնականացվեն ՌԷԳ-ի շրջանակում մասնակցության իրավունք ունեցող խմբերը (հիմնվելով թիվ 2003/35/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 3-րդ կետի վրա), ապահովի, որ հանրությանը տրվի ժամանակին և արդյունավետ հնարավորություն՝ մասնակցելու այն նախագծերի կամ ծրագրերի մշակմանը, փոփոխմանը կամ վերանայմանը, որոնք վերաբերում են ՇՄԱԳ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետում նշված ռազմավարական ոլորտներին, արտահայտելու իրենց կարծիքներն ու առաջարկությունները այն ժամանակ, երբ որոշումները դեռ չեն կայացվել, և բոլոր տարբերակները բաց են, ինչպես նաև ապահովի, որ հանրության կողմից ներկայացված դիտարկումները և կարծիքները պատշաճ կերպով քննվեն:

Հղումներ և նյութեր

ԳԼՈՒԽ 3. ՀԱՎԵԼՎԱԾ III. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ. ԹԵՄԱ V. ՀԸԳՀ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ [https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:22018A0126\(01\)](https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:22018A0126(01))



ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին կառավարության 2019 թվականի հունիսի 01-ի ի N 666-Լ որոշման I և II հավելվածները <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153164>

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 2014/52/ԵՄ հրահանգ՝ որոշակի պետական և մասնավոր նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին թիվ 2011/92/ԵՄ հրահանգում փոփոխություններ կատարելու մասին, ԵՏՏ-ին առնչվող տեքստ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0052>

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի հրահանգ թիվ 2001/42/ԵՀ՝ շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32001L0042>

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի ԵՄ հրահանգ թիվ 2003/4/ԵՀ՝ բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիության մասին, որով ուժը կորցրած է ճանաչվում Խորհրդի 90/313/ԵՏՀ հրահանգը <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32003L0004>

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կողմից 2003 թ. մայիսի 26-ին ընդունված թիվ 2003/35/ԵՀ հրահանգ, որով նախատեսվում է հանրային մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի և ծրագրերի մշակմանը և փոփոխություններ են մտցվում Խորհրդի թիվ 85/337/ԵՏՀ և թիվ 96/61/ԵՀ հրահանգներում, որոնք վերաբերում են հանրային մասնակցությանը և արդարադատության մատչելիությանը. Հանձնաժողովի հայտարարությունը <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32003L0035>

Եվրոպական հանձնաժողով. Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, Հանրային և մասնավոր փաստաթղթերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում. **ուղեցույցային փաստաթղթեր** (ՇՄԱԳ ուղեցույց. նախնական գնահատում (սքրինինգ) (2017), ՇՄԱԳ ուղեցույց. գործողության շրջանակի սահմանում (սքոփինգ) (2017), ՇՄԱԳ-ի մեջ կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության ինտեգրման ուղեցույց (2013)) https://environment.europa.eu/law-and-governance/environmental-assessments/environmental-impact-assessment_en

Եվրոպական հանձնաժողով, Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, Հանրային և մասնավոր փաստաթղթերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, **Հրապարակումներ** (ՇՄԱԳ-ի վերանայված հրահանգի (2011/92/ԵՄ



փոփոխված 2014/52/ԵՄ-ով) իրականացման վերաբերյալ տեղեկատվության և տվյալների հավաքագրում (2024) Չեկուցման ձևաչափ՝ ԾՄԱԳ-ի հրահանգի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն (2022)) https://environment.եՎ.ԵՄropa.ԵՄ/law-and-governance/environmental-assessments/environmental-impact-assessment_en

Եվրոպական հանձնաժողով, շրջակա միջավայրի գլխավոր տնօրինություն, որոշակի նախագծերի և ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին 2001/42 /ԵՎ հրահանգի իրականացում <https://op.ԵՄropa.ԵՄ/en/publication-detail/-/publication/7c2796c8-2786-4faf-bafd-e7bb93082b16>

Ներդրումային ծրագրերի ծախսերի և օգուտների վերլուծության ուղեցույց, համախմբման քաղաքականության տնտեսական գնահատման գործիք 2014-2020թթ https://www.fondosԵՄropeos.hacienda.gob.es/sitios/dgfc/es-ES/ipr/fcp1420/gf/feder/dg/Documents/CBA_Guide_Final_Report.pdf

ՄԱԿ-ի ԵՏՀ Տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության և շրջակա միջավայրի հարցերով արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա: <https://unեՎe.org/DAM/env/pp/documents/cep43e.pdf>

ՄԱԿ-ի ԵՏՀ Մասատրիխտի առաջարկություններ շրջակա միջավայրին վերաբերող հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում հանրության արդյունավետ մասնակցության խթանման վերաբերյալ: Պատրաստված է Օրինակի կոնվենցիայի ներքո https://unեՎe.org/sites/default/files/2022-10/1514364_E_web.pdf

Կառավարության 2021-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման հավելված I և հավելված II <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=158031>

2014 թվականի հունիսի 21-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը՝ 03.03.2014 թվականի փոփոխություններով. 3 մայիսի 2023 թ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=178468>

Կառավարության 2024 թ. մայիսի 2-ի որոշում N 643-Ն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին <https://www.arlis.am/documentView.aspx?docid=192441>

Կառավարության 2023 թ. դեկտեմբերի 28-ի որոշում N 2343-Ն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պետական փորձաքննության վերաբերյալ



հանրության իրազեկման և հանրային լուսմներ անցկացնելու մասին»
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188064>

Կառավարության 2024 թ. հուլիսի 25-ի որոշում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին»
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=195601>

Շրջակա միջավայրի նախարարի 2024 թ. հոկտեմբերի 29-ի N 438-Ն հրամանը՝ ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները (ՇՄԱԳ) հաստատելու մասին
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=199014>

Տեղեկատվության ազատության մասին օրենք
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=1372>

ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 15-ի որոշում N 1204-Ն՝ տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147567>

Կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի որոշում N 730-Լ՝ Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը եվ դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին <https://www.e-gov.am/gov-dԵՀrees/item/40374/>

Հայաստանի հանքարդյունաբերության ռազմավարությունը և հումքային հատվածում շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցության պլան
<https://documents1.worldbank.org/curated/en/750631594853733237/pdf/Stakeholder-Engagement-Plan-SEP-Armenia-Mineral-ՏԵՀtor-Policy-II-P173686.pdf>

Արդյունահանող ոլորտներում շահագրգիռ կողմերի խմբի գործունեության թափանցիկության նախաձեռնությանը մասնակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հայտարարությունը՝ ՀՀ կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի 750-Լ որոշմամբ հաստատված հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության՝ ռազմավարական էկոլոգիական գնահատում իրականացնելու պահանջի մասին
<https://transparency.am/hy/media/news/article/4915?fbclid=IwAR0VBZmhdXdPako3tYvdYJDEHiA6XiHt8zQR6p817j4aWJTtoU-U-mL1RjY>

Վարչական դատարանի որոշում թիվ ՎԴ/1049/05/15
<https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=administrative>



ՄիվիլՆեթն ու Թրանսփարենսի ինթերնեշնլը դատարանում հաղթել են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին <https://www.civilnet.am/news/667796/>

Հավելված

Ճոկուս-խմբային հարցազրույցների մասնակիցների և խմբերի ցանկ

1. Ալեն Ամիրխանյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն
2. Օլիմպիա Գեղամյան	Երևանի պետական համալսարանի շրջակա միջավայրի պահպանության կենտրոնի ղեկավար
3. Հերիքնազ Մկրտչյան, Արմինե Վարդանյան և Աննա Սարգսյան	Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետներ
4. Արման Ավետիսյան, Նաիրա Պետրոսյան, Վահրամ Հովհաննիսյան	Հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն և Շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչություն
5. Մարի Զաքրյան	Շրջակա միջավայրի նախարարի իրավական գծով խորհրդատու, Օրիուսի կոնվենցիայի ազգային համակարգող
6. Լիլիթ Աղաջանյան	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին կից կրթական և հետազոտական կենտրոնի ղեկավար
7. Հանքարդյունաբերությունից ազդեցություն կրած համայնքների ֆոկուս խումբ	Լոռու մարզի Ալավերդու և հարակից համայնքների բնակիչներ

Հարցաշար. (պատրաստվել է Ռեսուլ Վալենթերգ մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի «Մարդու իրավունքներ և շրջակա միջավայր» թեմատիկ ուղղության ղեկավար դոկտոր Կրտսեղիս Բոտուստե-Լիմայի աջակցությամբ, Շվեդիա)



1. Արդյո՞ք հանքարդյունաբերության ոլորտում ՇՄԱԳ գործընթացը կարգավորող օրենսդրությունը բավարար չափով լիարժեք և հստակ է, նախատեսում է բավարար ժամանակ հանրային լուսնեքը կազմակերպելու և հանրության արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար, այդ թվում՝ հանրությանը պատշաճ ծանուցելու, նյութերին ծանոթանալու, արդյունավետ քննարկումներ անցկացնելու, կարծիք տրամադրելու և արձագանք ստանալու համար:
2. Ո՞ր սուբյեկտներն են պատասխանատու հանքարդյունաբերության ոլորտում հանրային լուսնեքը կազմակերպելու և անցկացնելու համար: Արդյո՞ք պատասխանատու սուբյեկտները ունեն իրավասություն հավաստելու, որ հանրությանը տրամադրվել է հավաստի տեղեկատվություն և արդյունավետ կերպով մասնակցել է հանրային լուսնեքին:
3. Որքանո՞վ են հանրային լուսնեքի կազմակերպման և անցկացման համար պատասխանատու սուբյեկտները ապահովում, որպեսզի հանրությանը վաղ փուլում հասանելի լինի ամբողջական, հավաստի և մանրամասն տեղեկատվություն հանքարդյունաբերական նախագծային փաստաթղթերի, շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացին հանրության արդյունավետ մասնակցության իրավունքի մասին:
4. Որքանո՞վ հանրային լուսնեքի ընթացքում ներկայացվող տվյալներն ունեն բավարար գիտական հիմնավորում և արդյո՞ք այդ տեղեկատվությունը մատուցվում և մեկնաբանվում է բոլորի համար մատչելի կերպով, որպեսզի հանրությունը կարողանա տեղեկացված համաձայնության կամ անհամաձայնություն տալ նախատեսվող գործունեության իրականացմանը:
5. Որքանո՞վ է հանրային լուսնեքը կազմակերպող սուբյեկտների մասնագիտական հմտությունները (այդ թվում մարդու իրավունքների և խտրականության բացառման տեսանկյունից), նյութական միջոցների առկայությունը և տեխնիկական հագեցվածությունը թույլ տալիս ապահովել հանրության պատշաճ ծանուցումը և արդյունավետ մասնակցությունը հանրային լուսնեքին՝ ապահովելով նաև հետադարձ կապը և ներկայացված կարծիքների պատշաճ հաշվառումը:
6. Ի՞նչ իրավական, ինստիտուցիոնալ և պրակտիկ խնդիրներ են առաջանում Ռ-ազմավարական էկոլոգիական գնահատման (Ռ-Է-Գ) համար կազմակերպվող հանրային լուսնեքի ժամանակ՝ այդ թվում մարդու իրավունքների և խտրականության տեսանկյունից: Ինչո՞վ են Ռ-Է-Գ-ի վերաբերյալ հանրային



լուսնները տարբերվում ՇՄԱԳ-ի (շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման) հանրային լուսններից:

7. Ձեռնարկվում են արդյոք միջոցներ հանրային լուսններին խոցելի իրավիճակներում գտնվող մարդկանց արդյունավետ մասնակցության իրավունքն ապահովելու համար, ինչպիսիք են կանայք, էթնիկ փոքրամասնությունները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք:
8. Հաշվի առնելով հանաժո վառելիքից վերականգնվող էներգիայի անցնելու (կանաչ անցում) համար օգտակար հանաժոների պահանջարկի աճը (օրինակ՝ պղինձը Հայաստանի պարագայում)՝ դուք համարում եք, որ անհրաժեշտ են հատուկ միջոցառումներ կանաչ անցումը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից արդար և հավասարակշռված կազմակերպելու համար: Եթե այո, ապա ի՞նչ միջոցներ եք խորհուրդ տալիս: